ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀԱՅԵՐ, ՀՈՒՅՆԵՐ) ՆԿԱՏՄԱՄԲ 1920-1960-ԱԿԱՆ ԹԹ.

Է.00.02 Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ

մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական

աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2019

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մելքոնյան Ա. Ա.

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խառատյան Ա. Ա.

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ավագյան Ա. Գ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. դեկտեմբերի 23-ին, ժամը 14:30, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ 006 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4): Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում: Սեղմագիրն առաքված է 2019 թ. նոյեմբերի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
Պատմական գիտությունների թեկնածու Գ.Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո ծավալված ռազմաքաղաքական գործընթացները կարևոր դեր ունեցան ինչպես ամբողջ մերձավորարևելյան տարածաշրջանի, այնպես էլ թուրքական պետականության շարունակականության համար: Դրանց մեջ, իհարկե, առաջնային նշանակություն ունի ռազմական և քաղաքական գործիչ Մուսթաֆա Քեմալի (1934 թվականից՝ Աթաթյուրք) գլխավորած շարժումը, որի մեջ միավորվել էին ինչպես ռազմական, այնպես էլ՝ հասարակական-քաղաքական գործիչներ, հրոսակապետեր, ցեղապետեր և այլն: Շարժման նպատակն էր փրկել կործանվող Օսմանյան կայսրությունը, և այդ ճանապարհին կարևորագույն թիրախներից էին համարվում ցեղասպանություններից հետո գոյատևած քրիստոնյա բնիկ ժողովուրդները՝ հայերը, հույները (նաև Հայաստան և Հունաստան պետությունները) կամ ավելի լայն առումով՝ հայկական ու հունական գործոնները: Քեմալի գլխավորած շարժման մասնակիցների՝ քեմալականների գերակշիռ մեծամասնությունը երիտթուրքական Միություն և առաջադիմություն կուսակցության նախկին անդամներ էին, այլամերժ ու ցեղասպան գաղափարախոսության կրողներ և իրականացնողներ, այսինքն՝ հայերի ու հույների ցեղասպանությունների և հայրենազրկման կազմակերպիչներ ու մասնակիցներ: Ուստի, նրանց ծավալած շարժման ընթացքում՝ 1919-1923 թթ., և հետագայում ձևավորած պետությունում՝ Թուրքիայի Հանրապետությունում, շարունակվեց հայ և հույն ժողովուրդների դեմ ընդգծված խտրական քաղաքականությունը, որը միտված էր դեռևս 19-րդ դարից սկսված ցեղասպանական ծրագրի վերջնական իրագործմանը:

Հայտնի է, որ Օսմանյան կայսրության գոյության տարբեր շրջաններում քրիստոնյա հայ և հույն ժողովուրդները ենթարկվել են պետության կողմից ծրագրված և իրականացված ցեղասպանության: Այդ նույն պետական մտածողությունը, գործելաոճը շարունակվեց Թուրքիայի Հանրապետությունում, և ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի դիպուկ գնահատմամբ՝ կայսրության ցեղասպան գործելակերպի «որոշ տարրեր քեմալականների միջոցով փոխանցվեցին հանրապետական Թուրքիային» [1]: Այսօր էլ Թուրքիայում այլատյացության թիրախ են ոչ միայն քրիստոնյա փոքրամասնությունները, այլև ալևիները, քրդերը, քաղաքական այլ

[1] Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, էջ 211:

կողմնորոշում ունեցողները[2]: Ուստի, թուրքական պետական մտածողության առանցքի՝ այլամերժության ուսումնասիրությունը ունի գիտական ու քաղաքական արդիականություն:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Աշխատանքը նպատակ ունի ի ցույց դնել Օսմանյան կայսրությունից փոխանցված ցեղասպան քաղաքականության շարունակականությունը և դրա համար առանձնացվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել հայ և հույն ժողովուրդների նկատմամբ Թուրքիայում 1920-1960-ական թվականներին կիրառված պետական այլամերժ քաղաքականության առավել ընդգծված դրվագները: Հատկապես հայերի և հույների նկատմամբ կիրառված քաղաքականության ուսումնասիրությունը կարևորել ենք հետևյալ նկատառումներից ելնելով. նախ՝ հայերը և հույները թուրքական պետությունների (օսմանյան և հանրապետական) հավաքական թշնամու ամենաընդունված կերպարներն են և բացի այդ, Լոզանի պայմանագրով միայն այս երկու քրիստոնյա ժողովուրդներն ունեն Թուրքիա պետության կողմից ճանաչված փոքրամասնության կարգավիճակ այդ երկրում:
2. տրամաբանական մեկ շղթայի մեջ ներկայացնել թուրքական տարբեր իշխանությունների կողմից կիրառված հակահայկական, հակահունական քաղաքականությունը որպես պետական այլամերժ ու հաճախ ցեղասպան մտածելակերպի շարունակականություն:
3. ընդհանուր գծերով պատկերել Թուրքիա պետության «փոքրամասնական քաղաքականության» հետևանքները հայկական և հունական համայնքների վրա:
4. դիտարկել «այլամերժ պետության» և «այլամերժ հասարակության» համագործակցության տեսական և գործնական հարթություններն ու մեթոդները:
5. ներկայացնել միատարր այն է՝ թուրքական պետություն և մոնոլիտ՝ թուրք-իսլամական հասարակություն ձևավորելու պետական քաղաքական մտածողության դրույթները և հետևանքները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:

Թուրքիայի Հանրապետությունում ոչ մուսուլմանների հանդեպ կիրառվող պետական հալածանքի քաղաքականության մեջ կան կարևոր ժամանակաշրջաններ, որոնք առավել վճռորոշ են եղել ընդհանուր պատկերի ձևավորման հարցում: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ աշխատության

[2] Թուրքիայում տարբեր ազգերի, ինչպես նաև հասարակական-քաղաքական խմբերի նկատմամբ շարունակվող այլատյացության մասին մանրամասն տե՛ս Türkiye'de Farklı Olmak: Din ve Muhafazakârlık Ekseninde Ötekileştirilenler (Araştırma Grubu: Binnaz Toprak, İrfan Bozan, Tan Morgül, Nedim Şener), İstanbul, 2009.

շրջանակներում ուսումնասիրել ենք հայերի և հույների նկատմամբ հատկապես 1920-1960-ական թվականների պետական խտրական քաղաքականությունը և դրա կարևոր փուլերը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսության մեջ հիմնականում կիրառվել է պատմահամեմատական մեթոդը, որը նաև թույլ է տալիս զուգահեռներ տանել արդեն 21-րդ դարի սկզբին էլ պետական այլամերժ քաղաքականության և մտածողության շարունակվող դրսևորումների հետ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Հեղինակի կողմից առաջ է քաշվում Թուրքիայի Հանրապետության՝ որպես «այլամերժ պետության» տեսությունը, որը, ըստ էության, այլ գիտնականների կողմից մշակված և ապացուցված Օսմանյան կայսրության՝ որպես «ցեղասպան պետության» կոնցեպտի շարունակությունն է: Այս առումով «այլամերժ պետության» տեսությունը և դրա կիրառման գործնական ոլորտների ու որոշ օրինակների քննությունը գիտական նորույթ են, որը կարող է նաև օգտակար լինել թուրքական ցեղասպան քաղաքականությունն ամբողջականության և շարունակականության, ինչպես նաև մինչև մեր օրերը Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների հանդեպ կիրառվող քաղաքական գիծը խորությամբ ընկալելու հարցում: Հետցեղասպանական Թուրքիայում հայերի և հույների նկատմամբ իրականացված քաղաքականության նման ընդգրկմամբ և դիտանկյունից արված ուսումնասիրության նորույթն էլ ավելի է ընդգծվում կիրառված արխիվային, երբեմն ունիկալ փաստաթղթերի, ինչպես նաև կատարված դաշտային-հետազոտական աշխատանքների լույսի ներքո:

Ատենախոսությունն ամբողջությամբ և դրա առանձին դրույթներ կարող են կիրառվել ինչպես ՀՀ ԲՈՒՀ-երի համապատասխան ֆակուլտետների ուսումնական ծրագրերում՝ Թուրքիայի Հանրապետության պատմությանը, Թուրքիայի քաղաքականությանը, ցեղասպանությունների պատմությանը վերաբերող առարկաների շրջանակներում: Ատենախոսության որոշակի դրույթներ կարող են օգտակար լինել ՀՀ արտաքին քաղաքականության հայեցակարգի, ինչպես նաև միջազգային ասպարեզում Հայաստանի համար գերակա խնդիրները ներկայացնելու համապատկերում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի կողմից, աշխատանքի առանձին դրույթներ տեղ են գտել հեղինակի հրատարակած մենագրություններում և հոդվածներում: Թուրքիայի այլամերժ քաղաքականության տարբեր դրվագներ ներկայացվել և քննարկվել են հանրապետական ու միջազգային գիտաժողովներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ:

Թուրքիայի Հանրապետությունում գոյատևած քրիստոնյա փոքրամասնությունների և հատկապես հայերի ու հույների հանդեպ պետական քաղաքականությունն ամբողջականությամբ դիտարկելու համար անհրաժեշտ է օսմանյան շրջանի (հատկապես 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի) իրողությունների խորքային ընկալումը: Ուստի, այդ առումով ատենախոսության համար առաջնային կարևորություն ունի ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի ցեղասպանության ծագումնաբանությանը նվիրված աշխատությունը[3], որն էականորեն օգնել է վեր հանելու թուրքական պետական քաղաքականության շարունակման տեսական նախադրյալները: Հանրապետական Թուրքիայի քաղաքականության և հատկապես դրա որոշակի ուղղությունների ուսումնասիրության համար կարևորագույն նշանակություն ունեն այն աշխատությունները, որոնք նվիրված են երիտթուրքեր-քեմալականներ կապին, դրա ռազմական, քաղաքական, գաղափարախոսական, տնտեսական ասպեկտներին: Այդ թեմային նվիրված և խնդիրը, թերևս, լավագույնս բացահայտող ուսումնասիրություններից է հոլանդացի թուրքագետ Էրիկ Ցյուրխերի աշխատությունը[4], որն ընդունված է թուրքագիտական շատ դպրոցների կողմից որպես առավել խորքային հետազոտություն: Այս նույն թեմայի վերաբերյալ վերջերս հրատարակված ու արժեքավոր մենագրություններից հարկ է առանձնացնել պատմաբան Հանս Լուկաս Կիզերի աշխատությունը՝ նվիրված Թուրքիայի Հանրապետության հիմնադրման հարցում Թալեաթ փաշայի ունեցած դերակատարմանը[5]: Թեև վերը նշված արժեքավոր գրքերում երիտթուրքեր-քեմալականներ կապի բազմաթիվ բաղադրիչներ են վեր հանվում, սակայն այդ ամենի ընդգծված հակահայկական և հակահունական բնույթը ներկայացված է ընդհանուր համապատկերում: Ուստի, սույն ատենախոսության մեջ մենք փորձել ենք առավել կենտրոնանալ հենց հայկական ու հունական բաղադրիչների վրա՝ մեծապես օգտվելով արդեն արված ուսումնասիրություններից, սակայն դրանք համադրելով այլ փաստերի հետ ու ավելացնելով որոշակի փաստարկներ:

Թուրքիայում քեմալիզմի գաղափարախոսության որոշակի առանձնահատկությունները, ինչպես նաև թուրքական ֆաշիզմը խորությամբ ընկալելու հարցում կարևորել ենք թուրքագետ Վահրամ Տեր-Մաթևոսյանի

---

[3] Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009:

[4] Zürcher E. J., Millî Mücadelede İttihatçılık, İstanbul, 2016.

[5] Kieser H. L., Talaat Pasha: Father of Modern Turkey, Architect of Genocide, Oxford-Princeton, 2018.

արժեքավոր աշխատանքները [6] : Թուրքագետ Սուրեն Բաղդասարյանի աշխատությունը [7] մեզ մեծապես օգնել է 1920-1930-ական թվականների Թուրքիայի քաղաքական համակարգի ձևավորման առանձնահատկությունները դիտարկելու և նախորդ փուլի միջև շարունակականության դրվագները վեր հանելու հարցում: Հատուկ ուշադրության արժանի թեմա է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում նացիզմի տարածումը, այդ շրջանում թուրք-գերմանական հարաբերությունները որոնց է նվիրված թուրքագետ Հ. Կորխմազյանի արժեքավոր մենագրությունը [8], որտեղ ներկայացված են նաև գերմանական արխիվային բազմաթիվ փաստաթղթեր: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում պանթուրքիստական քարոզչության մանրամասներին [9], ինչպես նաև այդ ժամանակաշրջանում ֆաշիզմի գաղափարախոսության ներթափանցմանն ու տարածմանն է անդրադարձել թուրքագետ Ռ. Կոնդակչյանը [10]: 1945-1946 թթ. խորհրդա-թուրքական հարաբերությունների և դրանցում Հայկական հարցի արծարծումների վերաբերյալ արժեքավոր դիվանագիտական փաստաթղթեր են ներկայացված պատմաբան ու դիվանագետ Արման Կիրակոսյանի կազմած և նրա ընդարձակ առաջաբանով հրատարակված ժողովածուում [11] : Այդ նույն խնդրին է նվիրված պատմաբան-թուրքագետ Քրիստինե Մելքոնյանի ուշագրավ աշխատությունը[12]:

Հայերին և հույներին որպես թշնամի ներկայացնելը, քեմալական ազգայնամոլական շարժման ծավալման հիմնական լեյտմոտիվների դերում հանդես գալը լավագույնս արտացոլված են Թուրքիայի Հանրապետության

---

[6] Ter-Matevosyan V., Turkey, Kemalism, and the Soviet Union: Problems of Modernization, Ideology and Interpretation, New York & London, 2019, Տեր-Մաթևոսյան Վ., Ֆաշիզմի դրսևորումները Թուրքիայում. տեսության մի քանի հարցեր, Ժամանակակից Եվրասիա, Երևան, 2014, հատոր III (2), էջ 10-15:

[7] Բաղդասարյան Ս., Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Երևան, 2001:

[8] Корхмазян Р., Турецко-германские отношения в годы второй мировой войны, Ереван, 1977.

[9] Кондакчян Р., Пропаганда пантюркизма в Турции в годы Второй мировой войны, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1974, թիվ 1 (22), էջ 198-205:

[10] Кондакчян Р., Из истории идеологического проникновения германского фашизма в Турцию накануне и в период Второй мировой войны, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1976, թիվ 1 (28), էջ 235-240:

[11] Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг. (под редакцией Армана Киракосяна), Ереван, 2010.

[12] Մելքոնյան Ք., ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները. Հայկական հարցը, սնծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945-1947 թթ.), Երևան, 2013:

հիմնադրի՝ Մուսթաֆա Քեմալի տարբեր տարիների ելույթներում, հայտարարություններում, Էրզրումի և Սեբաստիայի համաժողովներում ընդունված բանաձևերում [13] : Դրանցում հայերն ու հույները հստակ թիրախավորված են, և դրանք նաև ատելության խոսքի ու այլամերժության բացահայտ օրինակներ են:

Թուրքիայի տարբեր տարիների պետական քաղաքականությունը քրիստոնյա փոքրամասնությունների վերաբերյալ առավել ամբողջական ընկալելու, ինչպես նաև առանձին հարցերի շուրջ բացառիկ փաստեր և տվյալներ գտնելու տեսանկյունից մեծ կարևորություն ունեն արխիվային փաստաթղթերը: Այդ առումով հարկ է առանձնացնել Հայաստանի Ազգային արխիվում պահվող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի (ֆոնդ 409), Հայ ազգային պատվիրակության (ֆոնդ 430), ՀԽՍՀ մինիստրների խորհրդի (ֆոնդ 113), ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարության (ֆոնդ 326), Հայ լուսավորչական եկեղեցու գործերի խորհրդի (ֆոնդ 823), Արտասահմանյան երկրների հետ բարեկամական և մշակութային կապերի հայկական կոմիտեի (ֆոնդ 709), Սփյուռքահայության հետ մշակութային կապի հանրապետական կոմիտեի (ֆոնդ 875) խնդրո առարկա ժամանակին վերաբերող փաստաթղթերը: Բացի այդ, ՀՀ Ազգային արխիվում պահվող անհատների, մասնագետների արխիվներից օգտակար են եղել թուրքագետ Հայկազուն Գալուստյանի (ֆոնդ 476) անձնական արխիվում հանդիպող տարբեր տվյալներ, վերլուծություններ, փաստեր: Խոսելով անձնական արխիվներից՝ ցանկանում ենք հատուկ առանձնացնել Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավոր (1957-1960 թթ.) Մկրտիչ Շելեֆյանի Ժնևում գտնվող և մեծ մասամբ անտիպ արխիվը, որտեղ պահվում են 20-րդ դարի Թուրքիայի պատմության և հատկապես հայ, հույն փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականությանը վերաբերող բացառիկ փաստաթղթեր, նամակներ, որոնք հատուկ կարևորություն ունեն մեր աշխատանքի համար: Շելեֆյանի արխիվից օգտվել ենք անձամբ Ժնևում գտնվելու ժամանակ նրա որդու՝ Արդեն Շելեֆյանի թույլտվությամբ և պատճենահանել որոշ փաստաթղթեր:

Ինչպես պատմագիտական բնույթի շատ աշխատանքներում, այնպես էլ մեր ատենախոսության համար հատուկ և սկզբնաղբյուրային նշանակություն ունեն թուրք հասարակական-քաղաքական տարբեր գործիչների հուշերը,

[13] Mustafa Kemal Atatürk, Nutuk, İstanbul, 2016, Atatürk'ün Sölev ve Demeçleri, II, (1906-1938), Ankara, 1959, Кемаль Ататюрк, Избранные речи и выступления, (редакция и вступительная статья профессора А. Ф. Миллера), Москва, 1966, Saray M., Atatürk'ün Konuşma ve Yazışmalarında Ermeni Sorunu, Ankara, 2010, Akgül S., Nutukta Azınlıklar Meselesi ve Atatürk'ün Azınlıklar Hakkında Görüşler, Atatürk Araştırma Merkezi Dergisi, C. X, Temmuz, Ankara, 1994, sayı 29, s. 455-462.

օրագրերը, ելույթներն ու հարցազրույցները: Ատենախոսության համար օգտակար են եղել Թուրքիայի երկարամյա վարչապետ և երկրորդ նախագահ Իսմեթ Ինյոնյուի օրագրերը[14] և հուշերը[15], երրորդ նախագահ Ջելալ Բայարի բանտային օրագիրը[16], 1920 թ. Հայաստանի Հանրապետություն ներխուժած և ցեղասպանություն իրագործած թուրքական բանակի հրամանատար Քյազըմ Քարաբեքիրի օրագրերը[17], 20-րդ դարի Թուրքիայի քաղաքական կյանքի կարևոր դերակատարներից Ֆայիք Ահմեթ Բարութչուի հուշերը [18] , ինչպես նաև քաղաքական և ռազմական այլ գործիչների հուշերն ու օրագրերը (Ռըզա Նուր, Հալիդե Էդիփ, Ահմեթ Աղաօղլու, Հուսեյին Ջահիթ Յալչընն, Ասըմ Ուս, Ֆալիհ Ռըֆքը Աթայ, դոկտոր Ռեշիդ, Ֆևզի Չաքմաք, Թուրգութ Օզալ): Օգտագործել ենք նաև հայ հոգևոր և հասարակական-քաղաքական գործիչների հուշեր, որոնցից հարկ ենք համարում հատուկ առանձնացնել Կոստանդնուպոլսի Հայոց երջանկահիշատակ պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի հուշերը[19], որոնք թույլ են տալիս դիտարկել օսմանյան վերջին շրջանի և քեմալական շարժման ընթացքում պետական ցեղասպան մտածողության կոնկրետ դրվագները:

Թեմայի վերաբերյալ ամբողջական պատկերացում ձևավորելու, առանձին հարցերի բացառիկ նրբերանգներին տեղեկանալու համար հատուկ կարևորություն ունեն թուրքական պետական հալածանքի քաղաքականության տարբեր դրվագների ականատես վերապրողների պատմությունների [20] և անձնական հուշերի տպագրված տարբերակները [21] : Եվ բնականաբար, ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք ոչ միայն սփյուռքահայ և պոլսահայ մամուլից (հատկապես «Ակոս» շաբաթաթերթից), այլև անդրադարձել

---

[14] İsmet İnönü, Defterler (1919-1973), 1. Cilt (Hazırlayan Ahmet Demirel), İstanbul, 2008, İsmet İnönü, Defterler (1919-1973), 2. Cilt (Hazırlayan Ahmet Demirel), İstanbul, 2008.

[15] İsmet İnönü, Hatıralar, Ankara, 2014.

[16] Celal Bayar, Kayseri Cezaevi Günlüğü (Hazırlayan: Yücel A. Demirel), İstanbul, 1999.

[17] Kâzım Karabekir, Günlükler (1906-1948), (Hazırlayan: Yücel Demirel), 1. Cilt, İstanbul, 2009, Kâzım Karabekir, Günlükler (1906-1948), (Hazırlayan: Yücel Demirel), 2. Cilt, İstanbul, 2009.

[18] Barutçu F. A., Siyasî Anılar 1939-1954, İstanbul, 1977.

[19] Զաւէն Արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947:

[20] Sessizliğin Sesi: Türkiyeli Ermeniler Konuşuyorlar (Derleyen: Ferda Balancar), İstanbul, 2011, Sessizliğin Sesi II: Diyarbakırlı Ermeniler Konuşuyorlar (Derleyen: Ferda Balancar), İstanbul, 2012, Sessizliğin Sesi III: Ankaralı Ermeniler Konuşuyorlar (Derleyen: Ferda Balancar), İstanbul, 2013, Sessizliğin Sesi IV: Izmitli Ermeniler Konuşuyorlar (Derleyen: Ferda Balancar), İstanbul, 2015.

[21] Çerkezyan S., Dünya Hepimize Yeter (Hazırlayan: Yasemin Gedik), İstanbul, 2003, Koçoğlu Y., Hatırlıyorum Türkiye'de gayrimüslim hayatlar, İstanbul, 2003, Koçoğlu Y., Azınlık gençleri anlatıyor, İstanbul, 2004, Yorgo Hacıdimitriadis'in Aşkale-Erzurum Günlüğü (1943) (Yayına hazırlayan Ayhan Aktar), İstanbul, 2011.

ենք թուրքական մամուլում տարբեր թվականներին տեղ գտած առանձին հրապարակումներին:

Ատենախոսության համար առանձնահատուկ կարևորություն ունեն նաև մեր կողմից իրականացված դաշտային-հետազոտական աշխատանքները, հարցազրույցներն ինչպես Թուրքիայի տարբեր վայրերում, այնպես էլ Եվրոպայում և Հայաստանում: Այդ աշխատանքների շրջանակներում հանդիպել և հարցազրույցներ ենք արել Թուրքիայի քաղաքացի կամ նախկինում քաղաքացի հանդիսացած տարբեր անձանց (հայեր, հույներ, զազաներ) հետ, որոնք ոչ թուրք ժողովուրդների դեմ իրականացված պետական հալածանքի կամ ականատես-վերապրողներն են, կամ նրանց ընտանիքներն են ենթարկվել այդ հալածանքներին և իրենք անմիջականորեն ու խորությամբ տեղյակ են թեմայի նրբերանգներին: Դաշտային-հետազոտական աշխատանքների ընթացքում առանձին անհատների հետ առավելապես զրուցել ենք 1938 թ. Դերսիմի ցեղասպանության, 1942 թ. Ունեցվածքի հարկի, 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի ջարդարարությունների մասին:

Հիմնախնդրի ուսումնասիրվածությունը:

Ինչպես հայտնի է Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի Հանրապետությունում ոչ թուրք փոքրամասնությունների և հատկապես հայերի ու հույների հանդեպ կիրառվել է պետական մշակված ունեզրկման քաղաքականություն: Դրա որոշակի դրվագներ խորությամբ ուսումնասիրված են հայկական մասնագիտական շրջանակների կողմից[22], այդ պատճառով մեր աշխատության մեջ այդ հարցերին անդրադարձել ենք հպանցիկ և առավելապես կենտրոնացել այդ քաղաքականության այն կողմերի վրա, որոնք մեզանում բավարար ուսումնասիրված չեն: Ե՛վ Օսմանյան կայսրությունում, և՛ Թուրքիայի Հանրապետությունում հայերի, հույների պետականորեն մշակված ունեզրկմանն են նվիրված հետազոտող Նազաթ Օնարանի հետաքրքիր և օգտակար աշխատությունները [23] : Հայերի լքյալ գույքի խնդիրը նաև ցեղասպանության և հանրապետական Թուրքիայում երիտթուրքական մտածողության շարունակականության համապատկերում դիտարկել և

[22] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը (քննական ակնարկ ըստ թրքական վաւերագիրներու), Պեյրութ, 1970: Հովհաննիսյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում և քեմալական Թուրքիայում, Երևան, 2016:

[23] Onaran N., Osmanlı'da Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi (1914-1919): Emvâl-i Metrûkenin Tasfiyesi, İstanbul, 2013, c. 1, Onaran N., Cumhuriyet'te Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi (1920-1930): Emvâl-i Metrûkenin Tasfiyesi-II, İstanbul, 2013, c. 2, Onaran N., Emvâl-i Metrûke Olayı: Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi, İstanbul, 2010.

վերլուծել են թուրք ուսումնասիրողներ Թաներ Աքչամն ու Ումիթ Քուրթն իրենց համատեղ աշխատության մեջ[24]:

Ուսումնասիրվող թեմայի շրջանակներում առանձնակի կարևորություն ունի հանրապետական Թուրքիայի ստեղծման առաջին տարիներին հիմնականում Ստամբուլում գոյատևած հայության վիճակը: Հանրապետական Թուրքիայում 20-րդ դարի առաջին կեսին հայության շրջանում տեղի ունեցած տարբեր գործընթացները խորությամբ քննության են ենթարկված պոլսահայ, սակայն ամերիկաբնակ թուրքագետ Լեռնա Էքմեքչիօղլուի հոդվածում [25] և մենագրությունում [26] : Հետցեղասպանական Թուրքիայի հայության հասարակական-քաղաքական տարաբնույթ հարցերի քննությանն է նվիրված պոլսահայ Թալին Սուջյանի ուշագրավ մենագրությունը[27]:

Հույների հայրենազրկման ամենամասշտաբային իրավական ձեռնարկը 1920-ականների սկզբին իրականացված, այսպես կոչված, թուրք-հունական բնակչության փոխանակման պայմանագրով նախատեսվող Թուրքիայի հույների տեղափոխումն էր Հունաստան: Չնայած այդ խնդրին նվիրված մի շարք հետազոտություններ կան, սակայն հույն ուսումնասիրող Միհրի Բելլիի[28] և Մ. Գյոքաչթրի[29] աշխատություններն առավել խորությամբ են ի ցույց դնում խնդրի տարբեր ասպեկտներ: 1936-1938 թթ. Դերսիմում տեղի ունեցած զարգացումները և թուրքական պետության կողմից իրականացված ցեղասպանության խնդիրն առավել համակողմանի քննելու համար հարկ է դիտարկել տարատեսակ փաստաթղթեր, զեկուցագրեր, որոնք առկա են Մ. Քալմանի գրքում[30]: Այս հարցի շրջանակներում հատուկ կարևորություն ունեն

[24] Akçam T., Kurt Ü., Kanunların Ruhu: Emval-I Metruke Kanunlarında Soykırımın İzini Sürmek, İstanbul, 2012.

[25] Ekmekçioğlu L., Kalanlar: Savaş Sonrasında ve Tek Parti Döneminde İstanbul Ermeni Cemaati // 1915: Siyaset, Tehcir, Soykırım (Hazırlayanlar: Fikret Adanır, Oktay Özel), İstanbul, 2015, ss. 537-553.

[26] Ekmekçioğlu L., Recovering Armenia: The Limits of Belonging in Post-Genocide Turkey, Stanford, California, 2016.

[27] Suciyan T., Modern Türkiye'de Ermeniler: Soykırımsonrası Toplum, Siyaset ve Tarih, İstanbul, 2018.

[28] Belli M., Türkiye-Yunanistan Nüfus Mübadelesi: Ekonomik Açıdan Bir Bakış (Çeviren: Müfide Pekin), İstanbul, 2006.

[29] Gökaçtı M. A., Nüfus Mübadelesi: Kayıp Bir Kuşağın Hikâyesi, İstanbul, 2010.

[30] Kalman M., Belge ve Tanıklarıyla Dersim Direnişleri, İstanbul, 1995.

նաև փաստավավերագրական ֆիլմերը[31] և ականատես-վերապրողների հուշերի հիման վրա պատրաստված հոդվածները[32]:

Թուրքիայի ոչ մուսուլման փոքրամասնությունների տարբեր խնդիրների շուրջ բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ է կատարել Թուրքիայում բնակվող, ազգությամբ հրեա ուսումնասիրող Ռըֆաթ Բալին, որը հեղինակել է 1940-ականների սկզբին հայերի, հույների և հրեաների շրջանում իրականացված, այսպես կոչված, 20 դասակարգի զորակոչին նվիրված ստվարածավալ մենագրություն[33], որը մինչ օրս այդ թեմայով, թերևս, առավել ամբողջական և բազմակողմանի աշխատությունն է, որտեղ օգտագործվել են աղբյուրներ, արխիվային փաստաթղթեր, ականատես վերապրողների հուշեր ու նամակներ: Խորհրդային շրջանում Թուրքիայի ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառված հալածանքների մասին ուշագրավ աշխատության հեղինակ է Ս. Ավանեսովը, և չնայած որոշ անճշտությունների, այնուամենայնիվ, այն եզակի գրքերից է, որն ընդգրկուն պատկերում է փոքրամասնությունների վիճակը 20-րդ դարի կեսերին[34]:

Խտրական քաղաքականության մեջ ընդհանրապես կարևոր տեղ է զբաղեցնում, այսպես կոչված, «տնտեսական ազգայնամոլությունը», որը Թուրքիայում բնակվող ոչ մուսուլման ժողովուրդների և հատկապես հայերի ու հույների նկատմամբ կիրառվել է ողջ ծավալով և ունեցել է աղետալի հետևանքներ: Դրա կարևոր և առաջնային պատճառներից էին ոչ մուսուլման ժողովուրդների ֆինանսական վիճակը և տնտեսության մեջ ունեցած ակնառու դերակատարումը: Օսմանյան կայսրությունում մուսուլմանական և քրիստոնեական բուրժուազիաների վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություն է թուրքագետ Հ. Ինճիկյանի աշխատությունը[35], որը տալիս է այդ հարցի համակողմանի պատկերը և զգալիորեն նպաստում հետագա զարգացումների խորքային պատճառները ճշգրիտ ընկալելու համար: Տնտեսական ազգայնամոլության քաղաքականության մեջ պետք է հատուկ առանձնացնել 1942-1944 թթ. Թուրքիայում կիրառված Ունեցվածքի հարկը, որը համարվում է ոչ մուսուլման փոքրամասնությունների դեմ իրականացված

---

[31] Kara Vagon - Dersim Katliamı Belgeseli (Yönetmen: Özgür Fındık), https://www.youtube.com/watch?v=mbgDwEBYfEQ

[32] Gündoğan K., Keşiş'in Torunlar: Dersimli Ermeniler, İstanbul, 2016, Gündoğan N., Gündoğan K., Dersim'in Kayıp Kızları: "Tertele Çenequ", İstanbul, 2016, Sarıdoğan N., Dersim'in Ermeni kayıp kızı kaybolan yıllarını istiyor http://www.stargazete.com/politika/dersimin-ermeni-kayip-kizi-kaybolan-yillarini-istiyor/haber-571903 (15, 05, 2012)

[33] Bali R., II Dünya Savaşında Gayrimüslimlerin Askerlik Serüveni: Yirmi Kur'a Nafıa Askerleri, İstanbul, 2008.

[34] Аванесов С., Положение национальных меньшинств в Турции, Ереван, 1963.

[35] Инджикян О., Буржуазия Османской империи, Ереван, 1977.

հալածանքներից ամենաշատ ուսումնասիրվածը. հարկատեսակի վերաբերյալ կան թուրք, խորհրդային և արևմտյան մի շարք հեղինակների աշխատություններ, հոդվածներ, սակայն դրանցից ընդամենը մի քանիսն են, որ խորությամբ պատկերում են խտրական քաղաքականության այդ կարևոր ուղղությունը, իսկ մնացած աշխատություններում (հատկապես խորհրդային ուսումնասիրողների) հանդիպում են առավելապես մակերեսային կամ նկարագրողական մոտեցումներ, երբեմն անգամ՝ սխալ եզրահանգումներ: Ունեցվածքի հարկի խնդրի ուսումնասիրության համար սկզբնաղբյուրային կարևոր նշանակություն ունի ժամանակի Ստամբուլի ֆինանսական վարչության պետ/գանձապետ Ֆայիք Օքթեի 1951 թ. հրատարակած «Ունեցվածքի հարկի աղետը» [36] փաստագրական գիրքը, որտեղ նախկին պաշտոնյան մանրամասներ է ներկայացնում հարկային այս պատժամիջոցի մասին, որի գործադրմանն ինքն էլ բավական ակտիվ ներգրավված է եղել: Թուրք հեղինակներից հարկ է առանձնացնել Ռըդվան Աքարին, որն Ունեցվածքի հարկի վերաբերյալ ուշագրավ աշխատության հեղինակ է [37]: Ունեցվածքի հարկին հայ հեղինակներից բավական հանգամանալից անդրադարձել են ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը [38], թուրքագետներ Ռ. Սահակյանը[39], Ռ. Կոնդակչյանը: Ի դեպ, հենց Ռ. Կոնդակչյանը խորհրդային շրջանում այն քիչ արևելագետներից էր, որը մանրամասն անդրադարձել է թուրքական իշխանությունների խտրական քաղաքականությանը՝ ուղղված ոչ թուրք փոքրամասնություններին[40]:

1955 թ. սեպտեմբերի 6-7-ին Ստամբուլում և մի շարք այլ քաղաքներում հույների և հայերի դեմ թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված ջարդարարությունների, թալանի մասին այսօր կա բավական հարուստ գրականություն: Մեր ատենախոսության համար օգտագործել ենք ինչպես թեմային վերաբերող ուսումնասիրություններ, այնպես էլ փաստաթղթեր, անձնական հուշեր պարունակող գրքեր, հոդվածներ, վկայություններ: 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերի մասին ամենաամբողջական և խնդրի տարբեր ասպեկտները բացահայտող մենագրությունների [41] և հոդվածների հեղինակ է Դիլեք Գյուվենը, որին

[36] Ökte F., Varlık Vergisi Faciası, İstanbul, 1951.

[37] Akar R., Aşkale Yolcuları (Varlık Vergisi ve Çalışma Kampları), İstanbul, 2006.

[38] Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 504-506:

[39] Սահակյան Ռ., Թյուրքիան Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և հետո, Երևան, 1957, էջ 25-26:

[40] Кондакчян Р., Внутренняя политика Турции в годы Второй мировой войны, Ереван, 1978.

[41] Güven D., 6-7 Eylül Olayları, İstanbul, 2005. Güven D., Cumhuriyet Dönemi Azınlık Politikaları ve Stratejileri Bağlamında 6-7 Eylül 1955 Olayları, İstanbul, 2009.

իրավամբ կարելի է համարել քրիստոնյա փոքրամասնությունների դեմ Թուրքիայի կիրառած խտրական քաղաքականության խորագիտակ մասնագետներից մեկը: Ջարդարարությունների գործով դատավարության ամբողջական սղագրությունները, տարբեր պաշտոնյաների՝ այդ ամենն արդարացնող հոդվածներ, հարցազրույցներ տեղ են գտել 1950-1960 թթ. Թուրքիայի նախագահ Ջելալ Բայարի թոռնուհու՝ Էմինե Գյուրսոյ Նասքալիի հեղինակած գրքում[42]: 2005 թ. Թուրքիայում հրատարակվեց պաշտոնաթող փոխծովակալ և սեպտեմբերյան դեպքերի ժամանակ Ստամբուլի Բեյօղլուի շրջանի ռազմական արտակարգ դրության դատարանի գլխավոր դատավոր Ֆահրի Չոքերի սեպտեմբերի 6-7-ին վերաբերող արխիվը[43], որը, ըստ նրա կտակի, պետք է տպագրվեր միայն իր մահից հետո: Արխիվում հավաքված են սեպտեմբերյան ջարդարարությունների մասին մեծ թվով սկանդալային փաստաթղթեր և տվյալներ (244 լուսանկար, 175 էջ փաստաթուղթ): Սեպտեմբերի 6-7-ի դեպքերի ուսումնասիրության համար կարևոր աղբյուր է Թուրքիայում հայտնի լրագրող-հետազոտող Սերդար Քորուջուի պատրաստած երկհատոր գիրքը[44], որում հավաքված է Կոստանդնուպոլսի Հունաց պատրիարքի անձնական լուսանկարիչ Դիմիտրիոս Կալումենոսի լուսանկարների ընդարձակ հավաքածուից մոտ 60 լուսանկար, որոնք արվել են դեպքերի ընթացքում և դրանց հաջորդած ժամերին ու լավագույնս ի ցույց են դնում ջարդարարության ողջ սարսափները:

1964 թ. հույների արտաքսումը Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնությունների հետ կապված մինչ օրս ամենաքիչ ուսումնասիրված թեմաներից է, և դրա վերաբերյալ առավել ամբողջականը ուսումնասիրողներ Հուլյա Դեմիրի և Ռըդվան Աքարի 1994 թ. հրատարակված աշխատությունն է[45]: Դրանից միայն տարիներ անց՝ 2019 թ., սոցիալական մարդաբան Իլայ Ռոմեին Օրսի կողմից կազմվել է ժողովածու, որտեղ մեկտեղվել են 1964 թ. հույների արտաքսման մասին հոդվածներ, հուշեր[46]:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, հավելվածներից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից:

---

[42] 6-7 Eylül Olayları Davası (Hazırlayan Emine Gürsoy Naskali), İstanbul, 2007.

[43] 6-7 Eylül Olayları: Fotoğraflar-Belgeler: Fahri Çoker Arşivi, İstanbul, 2005.

[44] Patriklik Fotoğrafçısı Dimitrios Kalumenos'un Objektifinden 6/7 Eylül 1955 (Hazırlayan: Serdar Korucu), I Cilt, İstanbul, 2015. Patriklik Fotoğrafçısı Dimitrios Kalumenos'un Objektifinden 6/7 Eylül 1955 (Hazırlayan: Serdar Korucu), II Cilt, "Hem Malınızı, Hem Canınızı!", İstanbul, 2016.

[45] Demir H., Akar R., İstanbul'un Son Sürgünleri, İstanbul, 1994.

[46] İstanbullu Rumlar ve 1964 Sürgünleri: Türk Toplumunun Homojenleşmesinde Bir Dönüm Noktası (Derleyen İlay Romain Örs), İstanbul, 2019.

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են ատենախոսության նպատակը, գիտական նորույթը, ժամանակագրական սահմանները, ինչպես նաև քննվում են օգտագործված աղբյուրները, գրականությունը և տրվում է հարցի ուսումնասիրվածության ընդհանուր պատկերը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ: ՔՐԻՍՏՈՆՅԱ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ (ՀԱՅԵՐ, ՀՈՒՅՆԵՐ) ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԱՅԼԱՄԵՐԺ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

1.1 Քեմալական ազգայնամոլական շարժման ծավալման «հայկական և հունական լեյտմոտիվը». «ատելության խոսքի» (hate speech) դրսևորումներ: 1919 թ. Օսմանյան կայսրությունում սկսված շարժումը, որը ղեկավարում էր գեներալ Մուսթաֆա Քեմալը և որն ուներ հստակ ազգայնամոլական բնույթ, ավարտվեց 1923 թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիայի Հանրապետության հռչակմամբ: Թուրքական պաշտոնական պատմագրության և հռետորաբանության մեջ առավելապես ընդունված է այն բնորոշումը, որ այդ շարժումը նախաձեռնել էին, որպեսզի կանխեին պարտված Օսմանյան կայսրությանը պարտադրվող տարատեսակ պայմանագրերի և պահանջների՝ թուրքական պետականության համար կործանարար հետևանքները: Սակայն մենք կարծում ենք, որ պարտված Օսմանյան կայսրությունում ծավալված շարժման համար առանցքայինը «հայկական և հունական լեյտմոտիվն էր», և պատահական չէ, որ այդ շարժման հետևանքով ձևավորված պետությունը զաղափարական առումով պետք է խարսխված լիներ հակահայկականության և հակահունականության վրա: Հարկ է հատուկ շեշտել, որ հենց Մուսթաֆա Քեմալը բազմիցս տարբեր առիթներով հրապարակավ արտահայտվել է շարժումը նախաձեռնելու հիմնական շարժառիթի մասին: 1919 թ. հուլիսի 6-ին Օսմանյան կայսրության պաշտպանության նախարարին ուղարկած իր պաշտոնական հեռագրում Քեմալը նշել է, որ այդ ամենը նա անում է «ազգի հետ միասին անկաշկանդ կերպով գործելու համար» և որպեսզի «սուրբ հայրենիքն ու ազգը փրկվեն մասնատվելու վտանգից և չդառնան **հույների ու հայերի** (*ընդգծումը մերն է- Ռ.Մ.*) իրձերի զոհ»[47]: «Հայկական և հունական լեյտմոտիվի» շեշտադրմանը քանիցս հանդիպում ենք Մուսթաֆա Քեմալի հետագա ելույթներում, հայտարարություններում, հեռագրերում ևս[48]: Եթե տարբեր հարցերի շուրջ տվյալ ժամանակի թուրք ռազմական և քաղաքական գործիչներն ունեին երբեմն

[47] Saray M., Atatürk'ün Konuşma ve Yazışmalarında Ermeni Sorunu, Ankara, 2010, s. 11.

[48] Մուսթաֆա Քեմալի ընդգծված հակահայկական և հակահայաստանյան (Հայաստանի առաջին Հանրապետություն) գործունեության, քայլերի, ելույթների մանրամասն վերլուծությունը տե՛ս Սաֆրաստյան Ռ., Մուսթաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Երևան, 2019, էջ 40-84:

սուր, երբեմն ավելի թույլ տարաձայնություններ, ապա հակահայկական պահվածքի, հայատյացության հարցում նրանք միանշանակ համախոհներ էին: Այսինքն՝ հայատյացությունը նոր ձևավորվող հանրապետական Թուրքիայում ուներ և, ցավոք, նաև հիմա ունի հասարակության ու քաղաքական շրջանակների ճնշող մեծամասնության անվերապահ աջակցությունը, և այդ հարցում կա կոնսենսուս: Թուրքիայի ազգային մեծ ժողովում 1920-1923 թթ. հակահայկական հռետորաբանությունը զբաղեցնում էր առաջնային տեղ: Բացի Մուսթաֆա Քեմալից, այլ գործիչներ ևս ժամանակ առ ժամանակ հանդես էին գալիս ծայրահեղ ազգայնամոլական, այլամերժ հայտարարություններով, որոնք շարունակվեցին նաև հետագայում: Այդպիսով ձևավորվեց, սաստկացավ ու մինչև մեր օրերը շարունակվում է թուրքական պետական այլատյաց հռետորաբանությունը՝ «ատելության խոսքը» (անգլ.՝ hate speech, թրք.՝ nefret söylemi), որի հիմնական թիրախներն են հայերն ու հույները:

*1.2 **Քրիստոնյա փոքրամասնությունների խնդիրը Լոզանի բանակցություններում. «Հայկական ազգային օջախ»-ի ստեղծման շուրջ քննարկումներ:*** 1922 թ. նոյեմբերի 20-ին սկսված Լոզանի կոնֆերանսում քննարկվում էին երեք հիմնական խնդիրներ՝ 1. տարածքային և ռազմական հարցեր, 2. տնտեսական և ֆինանսական հարցեր, 3. օտարերկրացիների և փոքրամասնությունների հարցեր: Լոզանի բանակցությունների ժամանակ ամենակարևոր և խնդրահարույց հարցերից մեկը Թուրքիայի տարածքում հայերի և հույների ցեղասպանություններից հետո գոյատևած քրիստոնյաների խնդիրն էր, որը քեմալականների համար առաջնային կարևորություն ուներ: Այս խնդիրն իր հերթին ուներ ածանցյալ այլ բաղադրիչներ ևս, որոնք վերաբերում էին ինչպես թուրքական իշխանություններին, այնպես էլ արևմտյան տարբեր պետություններին և նրանց տված խոստումներին ու ստանձնած պարտավորություններին: Հարկ է նկատել, որ բացի քրիստոնյա բնիկ ժողովուրդների, առավել կոնկրետ՝ հայերի և հույների հարցից, ինքնին խնդրահարույց էր ընդհանրապես փոքրամասնությունների հարցը, քանի որ Թուրքիայի պարագայում այդ եզրույթի ընկալումը, սահմանումը և տարաբաժանումը բախվում էին բազմաթիվ խնդիրների: Սակայն թուրքական պատվիրակությունը հասել է նրան, որ պայմանագրում ռասայական, լեզվական, կրոնական փոքրամասնություններ սահմանող դրույթը հանվել է ու արձանագրվել է միայն «ոչ մուսուլման փոքրամասնություն» ձևակերպումը:

Լոզանի բանակցությունների ժամանակ առաջ է քաշվել Թուրքիայի տարածքում «Հայկական ազգային օջախ» ստեղծելու հարցը: Ի սկզբանե թուրքական պատվիրակությունը և անձամբ Իսմեթ փաշան կտրականապես չէին ընդունում Թուրքիայում «Հայկական ազգային օջախ» ստեղծելու գաղափարը: Ավելորդ չէ նկատել, որ քեմալականները տարբեր բանակցությունների ժամանակ բազմիցս շեշտել են հայկական նահանգներում

հայերի կամ շատ փոքրաթիվ լինելը, կամ այն, որ այդ նահանգներում այլևս հայեր չկան, ուստի այդտեղ «Հայկական ազգային օջախ» ստեղծելը զուրկ է որևէ հիմքից: Ի վերջո, «Հայկական ազգային օջախ»-ի թեման թուրքական կողմի համառ պահվածքի և սկզբունքային դիրքորոշման հետևանքով նախ փոխում է իր բնույթը և հետո փաստացի դուրս մղվում բանակցությունների օրակարգից: Աքսորյալ և վերապրած հայերի Թուրքիա վերադառնալու հարցը նույնպես քննարկվել է Լոզանի բանակցությունների ժամանակ, սակայն թուրքական պատվիրակությունը համառորեն պնդել է, թե դա «չպետք է լինի միջազգային քննարկումների օրակարգի նյութ և պետք է կարգավորվի բացառապես թուրքական կառավարության լիազորությունների շրջանակներում»[49]:

Փաստորեն, Լոզանը դարձավ Հայկական հարցի միջազգայնորեն արծարծման չհաջողված դրվագներից մեկը, իսկ թուրք ազգայնամոլ գործիչ Ռըզա Նուրը նշում է. «Իրոք, Հայկական հարցը փակվեց, և այլևս բանակցությունների ժամանակ հայ բառը չլսվեց: Սա մի կողմից հայերին լավ դաս էր, քանի որ եվրոպացիները նրանց իրենց շահերի համար առաջ էին մղում, թույլ տալիս, որ կործանվեն, հետո նրանց ոչինչ չէին տալիս: Կարող եմ ասել, որ փաստացի Հայկական օջախի գաղափարը մենք եվրոպական դիվանագետների հետ միասին թաղեցինք»[50]:

1.3 Բնակչության փոխանակման պայմանագիրը կամ հույների «օրինականացված» հայրենազրկումը: Լոզանի բանակցությունների ժամանակ մյուս խնդիրը, որը պատճառ է դարձել սուր քննարկումների և բանավեճերի, այսպես կոչված բնակչության փոխանակման խնդիրն էր, որը նույնպես թուրքական պատվիրակության համար սկզբունքային հարցերից էր և որի վերաբերյալ քեմալական իշխանությունները նախօրոք կայացրել էին որոշում: Համաձայն այդ որոշման, ձևավորվող Թուրքիայի Հանրապետությունում հույների թվաքանակը հնարավոր բոլոր մեթոդներով պետք է հասցվեր նվազագույնի, ուստի Լոզանի բանակցությունների ժամանակ պետք է առաջ տարվեր այն միտքը, որ «անհամատեղելի» երկու ազգերի՝ թուրքերի և հույների հետագա շփումները հնարավոր են միայն տարբեր պետությունների քաղաքացի լինելու պարագայում: Երկարատև բանակցություններից և բանավեճերից հետո 1923 թ. հունվարի 30-ին Հունաստանի և Թուրքիայի միջև կնքվեց «Բնակչության փոխանակման վերաբերյալ» պայմանագիր, համաձայն որի՝ Թուրքիայի սահմաններում բնակվող (օսմանյան քաղաքացիություն ունեցող) ուղղափառ հույները և Հունաստանի քաղաքացի մուսուլման թուրքերը պետք է

[49] Akçam T., Kurt Ü., Kanunların Ruhu: Emval-I Metruke Kanunlarında Soykırımın İzini Sürmek, İstanbul, 2012, s. 112.

[50] Rıza Nur, Hayat ve Hatıratım, İstanbul, III Cild, 1967, s. 1065-1066.

փոխանակվեին[51]: Բացառություն էր արվում միայն Ստամբուլի բնակիչ հույների և Արևմտյան Թրակիայի բնակիչ մուսուլմանների համար, որոնք իրավունք ունեին մնալ[52]: Սակայն պետք է հատուկ շեշտել, որ հույներին Թուրքիայից դուրս բերելու հարցը Լոզանում քննարկելն ուներ որոշակի առումով ձևական բնույթ, և բնակչության փոխանակումն առավելապես պետք է բնութագրել որպես պոստ ֆակտում վիճակ: Նման կարծիքի պատճառն այն է, որ պայմանագրի ստորագրման պահին փոխանակման ենթակա հույների գերակշիռ մեծամասնությունը՝ շուրջ մեկ միլիոնը[53], արդեն իսկ լքել էր Թուրքիայի տարածքը՝ մազապուրծ փախչելով ջարդարարներից: Բնակչության փոխանակմամբ թուրքական իշխանություններն ապահովում էին ոչ միայն անցանկալի հունական տարրի հեռացում, այլև, ըստ էության, դա պետական թալանի հերթական փուլերից էր, քանի որ հույների մնացած ամբողջ գույքը և տները անցան պետությանը, որի մի մասը միայն հատկացվեց Հունաստանից տեղափոխված մուսուլմաններին[54]:

1.4 Երիտթուրքեր-քեմալականներ. գաղափարական և կադրային շարունակականություն: 1923 թ. ստեղծված Թուրքիայի Հանրապետության հիմնադիրների, ղեկավար կազմի, պետական բյուրոկրատիայի զգալի մասը նախկին երիտթուրքեր էին, որոնք էլ շարունակում և ինստիտուցիոնալ մակարդակի էին տեղափոխում արդեն ավանդական այլամերժ և ցեղասպան քաղաքականությունը: Հոլանդացի հայտնի թուրքագետ Էրիկ Ցյուրխերը Թուրքիայում երիտթուրքական կառավարման շրջանը հասցնում է մինչև 1950-ը, այն հիմքով, որ մինչ այդ իշխած քեմալական Հանրապետական ժողովրդական կուսակցությունը երիտթուրքերի դե ֆակտո շարունակողն էր, ու քեմալական ազգայնամոլական շարժման, գրեթե առանց բացառության, բոլոր առանցքային գործիչները նախկին երիտթուրքեր էին[55]: Ըստ թուրքագետ Սուրեն Բաղդասարյանի օբյեկտիվ դիտարկման և մեկնաբանված փաստերի, մինչև 1960 թ. Թուրքիայի 3 նախագահ, 5 վարչապետ, խորհրդարանի նախագահներ, բազմաթիվ նախարարներ եղել են երիտթուրքական կուսակցության նախկին

---

[51] Tosun R., Türk Yunan İlişkileri ve Türk-Rum Nüfus Mübadelesi, Konya, 2014, s. 5.

[52] Çetinoğlu S., İstanbul Doğumlu Rumların Kitlesel Kovulması-1964 http://anatoliblog.blogspot.com/2011/03/istanbul-dogumlu-rumlarin-kovulmasi.html (մուտք՝ 22, 01, 2018)

[53] Վարդանյան Գ., Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը (1914-1923 թթ.), Երևան, 2012, էջ 151:

[54] Koraltürk M., Erken Cumhuriyet Döneminde Ekonominin Türkleştirilmesi, İstanbul, 2011, s. 70.

[55] Zürcher E. J., Yenilenme ve Sessizlik: Savaş Sonrasında İttihatçıların ve Kemalistlerin Ermeni Soykırımına İlişkin Retorikleri // Soykırım Meselesi: Osmanlı İmparatorluğu'nun Son Döneminde Ermeniler ve Türkler, İstanbul, 2012, s. 408.

անդամներ[56]: Երիտթուրքերի և քեմալական ազգայնամոլական շարժման կապը, ըստ էության, ոչ միայն անխուսափելի էր, այլև տրամաբանական նաև կազմակերպչական առումով: Հստակ է այն փաստը, որ երիտթուրքական վերնախավը 1918 թ. փախուստից առաջ ստեղծել էր նոր շարժում ձևավորելու տեսական հիմքերը, իսկ գործնական քայլերն արվեցին վերը նշված բյուրոկրատիայի, ոստիկանության, բանակի և այլ ստորաբաժանումների շարքերում ընդգրկված երիտթուրքերի կազմակերպմամբ ու մասնակցությամբ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: «ՔԵՄԱԼԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ» ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Հայերն ու «հայկական գործոնը» քեմալական շարժման և Թուրքիայի Հանրապետության քաղաքական կյանքում 1920-1930-ական թվականներին:

Օսմանյան կայսրությունում Կոստանդնուպոլսի վերջին Հայոց պատրիարքն է եղել Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը, որի գահակալությունն ընթացել է երկու փուլով՝ 1913-1916 և 1918-1922 թթ.: Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության կրած պարտությունից հետո ստեղծված պայմաններում Զավեն պատրիարքը լծվում է ցեղասպանության ժամանակ մուսուլմանների կողմից առևանգված հայ կանանց ու երեխաների վերադարձման գործին: Պոլսո հայ համայնքում և պատրիարքությունում վիճակը փոխվում է քեմալական շարժման ծավալման և հաջողության հասնելուց հետո: Քեմալականները հենց սկզբից բացասական վերաբերմունք են դրսևորում Զավեն պատրիարքի նկատմամբ: Ցավալին այն է, սակայն, որ քեմալականները Հայոց պատրիարքի դեմ արշավն իրականացրել են հայ համայնքի զգուշավոր և իշխանամետ հատվածի օգնությամբ և ի վերջո, 1922 թ. դեկտեմբերի 10-ին Զավեն պատրիարքը ստիպված է եղել լքել Թուրքիան:

Ինչպես հայտնի է, Օսմանյան կայսրությունում հայերը որոշակի ներգրավվածություն ունեցել են քաղաքական կյանքում և ներկայացված են եղել նաև խորհրդարանում, սակայն Թուրքիայի Հանրապետության ձևավորման արդեն առաջին տարիներին և հետագայում էլ հայ համայնքը քաղաքականության նկատմամբ պասիվ դիրքորոշում որդեգրեց: Թուրքիայի խորհրդարանական համակարգում ոչ մուսուլման փոքրամասնությունների ներգրավվածության առումով մակերեսային փոփոխություն է նկատվում Ազգային ժողովի 1935 թ. ընտրությունների ժամանակ, երբ Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի կամքով հայ Պերճ Քերեսթեջյանը ընտրվում է պատգամավոր: Սակայն խորհրդարանական աշխատանքի ժամանակ Քերեսթեջյանի հայկական ծագումը երբևէ առաջնային չի եղել, ավելին՝ նա իր

[56] Բաղդասարյան Ս., Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Երևան, 2001, էջ 17:

գործունեությամբ և հայտարարություններով բացարձակ չի զիջել թուրք ազգայնամոլներին:

2.2 Քրիստոնյաների (հայեր, հույներ) «լքյալ գույքի» թալանի շարունակությունը հանրապետական Թուրքիայում (1920-ականներ):

Թուրքիայի Հանրապետության հիմնադրման և կայացման հարցի համատեքստում կարևոր և անկյունաքարային նշանակություն ունի Օսմանյան կայսրության քաղաքացի հայերի և հույների շարժական ու անշարժ գույքի պետականորեն ծրագրված և իրականացված թալանը: Հարկ է հատուկ փաստել, որ հիշյալ խնդիրը ևս գտնվում է երիտթուրքեր-քեմալականներ շարունակականության հարցի շրջանակներում, և Օսմանյան կայսրությունում սկսված գործընթացը շարունակվել է նաև հանրապետական Թուրքիայում: Ընդ որում, այս շարունակականությունը դրսևորվել է և՛ քաղաքական, և՛ իրավական ոլորտներում: Այսպես, 1920 թ. ապրիլի 23-ին քեմալականները նախ չեղյալ հայտարարեցին սուլթանական կառավարության որոշումը «Լքյալ գույքերի մասին» օրենքի չեղարկման վերաբերյալ և վերականգնեցին համանուն օրենքի 1915 թ. ընդունված տարբերակը՝ ավելացնելով որոշ նոր հոդվածներ: «Լքյալ գույքի մասին» օրենքն ընդունելիս թուրքական իշխանություններն իբրև թե պահպանել էին իրավական որոշ չափորոշիչներ. ուսումնասիրողները դրանցում առանձնացնում են այն, որ օրենքը չի ժխտում գույքի իրական պատկանելությունը, այսինքն՝ այն, որ դրանց տերերը հայեր են կամ հույներ: Դրանով հանդերձ՝ թուրքական իշխանություններն ամեն ինչ արել են՝ ստեղծելու փակուղային իրավիճակ, երբ գույքի տերը փաստաթղթերով մնում է հայը կամ հույնը, սակայն նրան հնարավորություն չի տրվում վերադառնալ Թուրքիա և տեր կանգնել գույքին (սա էլ իր հերթին կարող է վերաբերել այն բացառիկ դեպքերին, երբ գույքի տերերը կարողացել են փրկվել ցեղասպանությունից): Հայկական և հունական գույքերի թալանը շարունակելու, դա ամեն կերպ արդարացնելու և պաշտպանելու թուրքական քաղաքականության մեջ, բացի, այսպես կոչված, պետական շահից, անշուշտ, կար նաև անձնական շահագրգռվածություն, ընդ որում՝ և՛ պետական վերնախավի, և՛ հասարակության տարբեր շերտերի մակարդակով: Բազմաթիվ ուշագրավ փաստաթղթեր անհերքելիորեն ապացուցում են, որ Թուրքիայի Հանրապետության առաջին տարիներին քեմալական ամբողջ վերնախավը և նրանց հետ առնչվող անձինք զբաղվել են հայկական ու հունական լքյալ գույքի յուրացմամբ և նաև դրա շնորհիվ հարստացել են:

2.3 Թուրքական ազգայնամոլական լեզվաքաղաքականության հիմնական առանձնահատկությունները (1920-1930-ական թթ.) և հետևանքները:

Օսմանյան կայսրությունում ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ դարեր շարունակ իրականացված հալածանքի քաղաքականությունը չէր կարող շրջանցել նաև լեզվական ոլորտը: Բնականաբար, այդ քաղաքականության

գլխավոր նպատակն էր ստիպել կայսրության տարածքում բնակվող բոլոր ոչ թուրք ժողովուրդներին չկիրառել և մոռանալ իրենց մայրենի լեզուները, փոխարենը կիրառել թուրքերեն (օսմաներեն): Ոչ թուրք ժողովուրդների մայրենի լեզուների դեմ պայքարը գրեթե նույն մեթոդներով շարունակվեց նաև Թուրքիայի Հանրապետությունում: Հարկ է նկատել նաև, որ հանրապետական Թուրքիայում լեզվական հալածանքն արտացոլվեց ոչ միայն քրիստոնյա և հրեա փոքրամասնությունների, այլև իսլամադավան քրդերի, չերքեզների և այլ ժողովուրդների հանդեպ ևս: Հատկանշական է, որ թուրքական իշխանություններն այլ ազգերի և հատկապես քրիստոնյա փոքրամասնությունների դեմ լեզվական հալածանքի արշավում ակտիվորեն ընդգրկեցին ազգայնամոլ երիտասարդությանը: Տասնամյակներ տևած այդ հալածանքի պայմանական և խորհրդանշական անվանումն էր «Հայրենակի՛ց, թուրքերեն խոսիր» կարգախոսը [57] : Սակայն կարևոր է փաստել, որ «Հայրենակի՛ց, թուրքերեն խոսիր» նախաձեռնությունը, ըստ էության, երբևէ չի էլ դադարել. եթե պաշտոնապես սկսվել է 1928-ին, ապա դադարեցվելու մասին գրեթե ոչ մի փաստ չկա, և Թուրքիայում այսօր էլ նույն միտումները պահպանվում են, իսկ հասարակության տրամադրություններն էլ ավելի ագրեսիվ են դարձել: Պետական և հասարակական մակարդակով արգելելով մայրենիի կիրառումը՝ Թուրքիան ոչ միայն խախտել է իր միջազգային որոշակի պարտավորությունները, այլև էական վնաս հասցրել տարբեր ժողովուրդների ազգային ու մշակութային ինքնություններին:

2.4 Հայերի աքսորները հանրապետական Թուրքիայում 1920-1930-ական թվականներին: Հանրապետական Թուրքիայում մինչև 20-րդ դարի կեսերը հայերի գաղթերը կրել են երկու բնույթ՝ ներքին և արտաքին: Ներքին գաղթերը վերաբերել են գավառներում պահպանված հայության բեկորներին, որոնք կանգնած են եղել բարդ երկընտրանքի առաջ՝ մնալ գավառում և բռնել վերջնական ուծացման ճանապարհը կամ տեղափոխվել Ստամբուլ և ինտեգրվելով հայ համայնքին՝ փորձել վերագտնել աղճատված ինքնությունը: Բացի այդ, 1920-1930-ական թվականներին թուրքական պետությունն իրականացրել է տարբեր նահանգներում գոյատևած հայության առանձին խմբերի աքսորներ և՛ երկրի ներսում, և՛ երկրի սահմաններից դուրս, ու այդ ժամանակ կիրառված մեթոդները, կազմակերպչական ոճը չեն տարբերվել 1915-ին իրականացվածից: Հանրապետական Թուրքիայում հայերի առաջին առավել զանգվածային արտաքսումը տեղի է ունեցել 1929 թ. կեսերին, երբ արևելյան որոշ գավառներից՝ Դիարբեքիրից, Խարբերդից, Բալուից, Մարդինից դեպի

[57] Bali R., “Vatandaş Türkçe Konuş!” veya Bir Ulus-Devletin Kuruluşunda Dil Birliğinin Gerçekleşmesi Çabaları, (Sunuş); Galanti A., Vatandaş Türkçe Konuş! (Çevrimyazı Ömer Türkoğlu), Ankara, 2000, s. vii

Սիրիա աքսորի են ենթարկվել ցեղասպանությունից փրկված շուրջ 30 հազար հայեր[58]: 1929-1930 թթ. հայերի բռնագաղթից կարճ ժամանակ անց՝ 1934 թ. թուրքական իշխանությունները կրկին նախաձեռնել են Թուրքիայի տարբեր նահանգներում գոյատևած հայության առանձին բեկորների աքսորը, որն իր ծավալով զիջում էր նախորդին: Աքսորի մասին ԱՄՆ արտաքին գործերի նախարարին ուղարկած «հույժ գաղտնի» դասիչով զեկուցագրի հեղինակ ամերիկացի դիվանագետ Սքիները այդ քայլը համարում է «Անատոլիան լիովին թուրքացնելու քաղաքականություն»[59]:

2.5 Դերսիմի հայկական ներկայությունը և Թուրքիայի պետական քաղաքականությունը գոյատևած հայության նկատմամբ 1936-1938 թթ.. ցեղասպանության շարունակություն: Դերսիմը տարբեր ժամանակաշրջաններում յուրահատուկ նշանակություն է ունեցել ինչպես հայերի, այնպես էլ այդ տարածքներում հաստատված զազաների, քրդերի համար: Օսմանյան կայսրությունում Դերսիմը ըստ էության ունեցել է կիսանկախ վիճակ և դա եղել է պետության մտահոգության առարկա և այդ խնդիրը փոխանցվելու էր արդեն նորաստեղծ Թուրքիայի Հանրապետության քաղաքական օրակարգ ու դառնալու էր թուրքական իշխանությունների առաջնային մտահոգություններից մեկը: Թուրքիայի Հանրապետության գոյության առաջին տարիներից պետությունն իր բոլոր ռեսուրսներով սկսեց զբաղվել Դերսիմի խնդրով և մշակել դրա թուրքանպաստ լուծման համալիր ծրագիր: Արդեն 1936-ի վերջին թուրքական զորքերը (նաև ավիացիան) սկսեցին ռազմական գործողություններ իրականացնել դերսիմիցիների նկատմամբ. սկսվեց Դերսիմի ապստամբությունը, որը թուրքական պետության կողմից ճնշվելուն զուգահեռ 1937-1938 թթ. տեղի ունեցավ խաղաղ բնակչության ցեղասպանությունը և տեղահանումը: Այդ ժամանակ գործի դրվեցին այն բոլոր մեթոդները, որոնք կիրառվել էին Հայոց ցեղասպանության տարիներին և թուրքական իշխանությունների վայրագություններին զոհ են գնացել տարբեր տվյալներով 70-ից 100 հազար մարդ:

Դերսիմը և արդեն 1930-ականներին այնտեղ ծավալվող ռազմական ու ցեղասպան գործողություններն ուղղակի առնչություն ունեն Թուրքիայում գոյատևած հայերի հետ: Ցեղասպանությունների ժամանակ Դերսիմում ապաստանած հայերի հարցը թուրքական իշխանություններին մտահոգել է տարբեր տարիներին, և օսմանյան պաշտոնյաները դիմել են դերսիմյան ցեղապետերին սպանդից փրկված հայերին հանձնելու պահանջով: Թուրքական

---

[58] Walker C., Armenia: The survival of a nation, London, 1980, p. 348, նույնը տե՛ս նաև Hofman T., Armenians in Turkey today, Uppsala, 2003, p. 15.

[59] Records of the Department of state Relating to the Internal Affairs of Turkey, 1930-1944, տե՛ս նաև Aktar A., Varlık vergisi ve “Türkleştirme” politikaları, İstanbul, 2000, s. 93.

իշխանությունները Դերսիմում ապաստանած հայերի խնդիրն ուշադրության կենտրոնում են պահել նաև հանրապետության հիմնադրումից հետո, և քեմալական իշխանությունները պարբերաբար զազա ցեղախմբերին հիշեցրել և պահանջել են հանձնել փրկված հայերին ու նրանց սերունդներին[60]: 1937 թ. ճնշելով Դերսիմի դիմադրությունը և անցնելով ցեղասպանության իրագործմանը՝ թուրքական իշխանություններն արդեն բացահայտ էին հայտարարում, որ իրենց հիմնական թիրախներից են Հայոց ցեղասպանության ժամանակ փրկված և Դերսիմում բնակություն հաստատած հայերը, որոնք կրկին ենթարկվել են ցեղասպանության:

2.6 Ալեքսանդրեթի սանջաքի բռնակցումը Թուրքիային և տեղի հայերի արտագաղթը: Չնայած Լոզանի պայմանագրով դե յուրե լուծված էին համարվում մերձավորարևելյան տարածաշրջանի սահմանային որոշակի հարցեր, այնուամենայնիվ, Թուրքիայի Հանրապետության վերնախավը և անձամբ նախագահ Քեմալ Աթաթյուրքը շարունակում էին հետապնդել ծավալապաշտական նկրտումներ: Դրանք հատկապես ցայտուն դրսևորվում էին Սիրիայի Ալեքսանդրեթի սանջաքի (թուրքական տերմինաբանությամբ՝ Հաթայ, իսկ բռնակցումից հետո՝ Հաթայի նահանգ) նկատմամբ, որի շուրջ թուրքական իշխանությունների բացահայտ զավթողական բնույթի հայտարարությունները և դրանց զուգահեռ միջազգային տարբեր հարթակներում քննարկումներն էլ ավելի ակտիվացան 1930-ականների երկրորդ կեսին: Ի վերջո 1937 թ. Թուրքիային հաջողվել է ֆրանսիացիների հետ գալ պայմանավորվածության և առանց ռազմական միջամտության ապահովել, որպեսզի թուրքական զորքը ներխուժի Ալեքսանդրեթ և այնուհետ միջազգային իրավունքի ու եվրոպական «ժողովրդավարական» արժեքների կոպիտ ու բացահայտ ոտնահարումների հետևանքով այդ տարածքը նախ ինքնավարություն ստանա «Հաթայ պետություն» անվամբ, իսկ այնուհետ «հանրաքվե» անցկացնելու միջոցով բռնակցվի Թուրքիայի Հանրապետությանը: Ալեքսանդրեթի սանջաքում 1937 թ. առավել արժանահավատ տվյալների համաձայն՝ կային շուրջ 43 հազար հայեր[61], որոնք փորձելով խուսափել թուրքական սպառնալիքից 1938-1939 թթ. արտագաղթեցին Ալեքսանդրեթից դեպի Սիրիա ու Լիբանան (Տարտուս, Քեսաբ, Դամասկոս, Բեյրութ, Լաթաքիա և այլ վայրեր)[62]: Սանջաքի հայերից 1938-1939 թթ. չի արտագաղթել ընդամենը 30

---

[60] Kalman M., Belge ve Tanıklarıyla Dersim Direnişleri, İstanbul, 1995, s. 173.

[61] Բայրամյան Ա., Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-1939 թթ.), Երևան, 1998, էջ 18:

[62] Pekesen B., The Exodus of Armenians from the Sanjak of Alexandrette in the 1930s // Turkey Beyond Nationalism. Towards Post-Nationalist Identities (ed. Hans-Lukas Kieser), London, 2006, p. 63.

ընտանիք՝ տարբեր գյուղերից, որոնց էլ ավելի ուշ թուրքական իշխանությունները վերաբնակեցրել են Վաքըֆլը գյուղում, որը մինչ օրս էլ Թուրքիայի միակ հայաբնակ (քրիստոնյա) գյուղն է: Ալեքսանդրեթի հայերի 1938-1939 թթ. գաղթը Հայոց ցեղասպանության առաջացրած հավաքական վախի և տրավմատիկ հիշողության ուղղակի հետևանք է:

2.7 Երիտթուրք ոճրագործների հերոսացման իրավական և քաղաքական գործընթացը հանրապետական Թուրքիայում 1920-ական թվականներին:

Մասնագիտական և ոչ մասնագիտական շրջանակներում շատ է խոսվում այն փաստի մասին, որ Հայոց ցեղասպանությունը կազմակերպած և իրականացրած երիտթուրք ոճրագործներին դեռևս 1919-1921 թթ. դատապարտել են հենց օսմանյան դատարանները՝ նրանց մեղավոր ճանաչելով հայերի տեղահանության և կոտորածների մեջ: Սակայն այդ նույն ժամանակաշրջանում Անկարայում հաստատված քեմալականների կառավարությունը զուգահեռաբար լծվեց երիտթուրք ոճրագործների արդարացման և հերոսացման գործին, իսկ արդեն Թուրքիայի Հանրապետությունում այդ ամենը ստացավ նաև կոնկրետ իրավական ձևակերպում: Այսպես, 1926 թ. մայիսին ԹԱՄԺ-ը ընդունում է Թուրքիայի կառավարության ներկայացրած մի օրինագիծ[63], որը վերնագրված էր. «Հայկական հանցագործ կոմիտեների կողմից սպանված կամ էլ տարբեր կերպ հալածանքի ենթարկված պետական գործիչների ընտանիքներին անշարժ գույքի և հողատարածքի տրամադրման վերաբերյալ օրենք»: Օրինագծով առաջարկվում էր հայ վրիժառուների կողմից ոչնչացված երիտթուրքերի «ընտանիքներից ամեն մեկին **հայկական լքյալ գույքից** (*ընդգծումը մերն է- Ռ.Մ.*) հատկացնել բնակելի տարածք 20 հազար լիրայի արժողությամբ»: Օրինագիծը միաձայն քվեարկությամբ ընդունվում է ԹԱՄԺ-ի կողմից ու պաշտոնապես ուժի մեջ մտնում 1926 թ. հունիսի 27-ին: Վստահաբար կարող ենք պնդել, որ երիտթուրք ոճրագործներին հերոսացնելու գործընթացը Թուրքիայի Հանրապետության պատմության ողջ ընթացքում (ընդհուպ մինչև մեր օրերը) կրում է շարունակական բնույթ: Դա դարձել է նաև թուրքական պետական-պաշտոնական մտածողության մի բաղկացուցիչ մաս, որը կրել և կրում են թուրքական պաշտոնեության բազմաթիվ սերունդներ ու ներկայացուցիչներ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ: ՊԵՏԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՂԵՌՆԻ» ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

3.1 Թուրքիա-նացիստական Գերմանիա հարաբերությունները Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին. ազդեցության տեսական և

---

[63] Açıkses E., Türkiye Büyük Millet Meclisi'nin Ermeni Komiteleri Tarafından Şehit Edilenlerin Ailelerine Yaptığı Yardımlar, Ermeni Araştırmaları, Ankara, 2002, sayı: 6, s. 84.

գործնական ոլորտներ: Տարբեր ժամանակաշրջաններում թուրք-գերմանական հարաբերությունները ձևավորվել են ռազմավարական, դաշնակցային սկզբունքների հիման վրա: Հատկապես 20-րդ դարի սկզբին վերը նշվածը դրսևորվեց ռազմական դաշինքի, փոխօգնության, քաղաքական սերտ և բարեկամական հարաբերությունների տեսքով: Հետագայում էլ արդեն քեմալական ազգայնամոլական շարժման հաղթանակից հետո Գերմանիայի և Թուրքիայի միջև ձևավորվել են բարեկամական սերտ հարաբերություններ: Կարևոր է նկատել, որ կան անհերքելի ապացույցներ, փաստեր և տվյալներ, որ Հիտլերի հիացմունքի և ընդօրինակման իդեալը կամ գոնե դրանցից առաջիններից մեկը եղել է Աթաթյուրքը, որին նա համարել է իր գաղափարական ուսուցիչ[64]: Թուրք-գերմանական հարաբերությունների այս դրական դինամիկան ցայտուն կերպով դրսևորվեց նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: ԽՍՀՄ-ի դեմ նացիստական Գերմանիայի հարձակումը հարմար առիթ էր, որպեսզի նորից աշխուժանան ԽՍՀՄ կազմի մեջ գտնվող թյուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տարածքների և Կովկասի նկատմամբ թուրքական հավակնությունները: Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակներում առկա ազգայնամոլական և կոնկրետ հակահայկական տրամադրություններն արտացոլող և դրանց աճին նպաստող խորհրդանշական քայլ էր 1943 թ. երիտթուրք ոճրագործ Թալեաթ փաշայի աճյունը Գերմանիայից Թուրքիա տեղափոխելը և պետական արարողակարգով վերահուղարկավորելը: Թուրքիայի ուղղակի և անուղղակի ռազմական գործողությունների շարքում հատուկ կարևորվում է այն, որ 1942 թ. ամռան-աշնան ամիսներին թուրքական բանակի 26 դիվիզիա է տեղակայվել խորհրդա-թուրքական սահմանին՝ դրանով էական վնաս հասցնելով ԽՍՀՄ-ին, քանի որ վերջինս նույնպես ստիպված էր որոշ ուժեր պահել սահմանի այդ մասում, մինչդեռ դրանք կարող էին օգտագործվել ռազմաճակատի այլ հատվածներում: Թուրքիայի և նացիստական Գերմանիայի ռազմաքաղաքական շփումների համապատկերում ուշագրավ է նաև 1943 թ. հունիսի 25-ից հուլիսի 7-ը անձամբ Հիտլերի հրավերով թուրքական պատվիրակության այցը խորհրդա-գերմանական ռազմաճակատի տարբեր հատվածներ[65]:

3.2 «Էթնիկ զորակոչ» Թուրքիայի Հանրապետությունում (1941-1942 թթ.): 1941 թ. Թուրքիայի իշխանությունները հայտարարել են զորակոչ, որը մեծապես վերաբերել է երկրի ոչ մուսուլման քաղաքացիներին՝ հայերին, հույներին, հրեաներին: Զորակոչը կազմակերպվել է ըստ որոշակի դասակարգման (թվով

---

[64] Այդ մասին մանրամասն տե՛ս Ihrig S., Atatürk in the Nazi Imagination, Cambridge, 2014, pp. 108-146.

[65] Այցի մասին տե՛ս Bengin T., Türk paşanın Hitler'le pazarlığı, Milliyet, 09, 01, 1991.

քսան), մեծ մասամբ տարիքային սկզբունքի հիման վրա: Աղբյուրները փաստում են, որ զորակոչի է ենթարկվել ոչ մուսուլման փոքրամասնությունների ներկայացուցիչ չափահաս տղամարդկանց մեծամասնությունը և բացառություն չեն կազմել անգամ հոգեկան հիվանդներն ու հաշմանդամները[66]: Կարևոր է շեշտել, որ ոչ մուսուլմանների զորակոչի որոշումն ընդունվել է հույժ գաղտնիության պայմաններում և տեղի է ունեցել ոչ միայն Ստամբուլում, այլև այն վայրերում, որտեղ պահպանվել էին հայերի, հույների, հրեաների փոքրիկ համայնքներ: Զորակոչված ոչ մուսուլմանները ենթարկվում էին Թուրքիայի ոչ թե պաշտպանության, այլ հասարակական աշխատանքների նախարարությանը, և աշխատում էին տարատեսակ շինարարություններում: Անդրադառնալով 20 դասակարգի զորակոչի նպատակներին՝ հարկ է նկատել, որ առավելապես տարածված է եղել այն տեսակետը, համաձայն որի՝ թուրքական իշխանությունները, պատրաստվելով մտնել պատերազմի մեջ նացիստական Գերմանիայի օգտին, նախօրոք հավաքել և չեզոքացրել են «5-րդ շարասյուն» համարվող ոչ մուսուլման փոքրամասնություններին:

3.3 Թուրքական «ազգային բուրժուազիա» ձևավորելու ազգայնամոլական մեթոդաբանությունը: Հայտնի է, որ դարեր շարունակ Օսմանյան կայսրությունում տնտեսության մեջ գերիշխող դիրք էին գրավում ոչ մուսուլմանները, և ինչպես նկատում է ակադեմիկոս Հր. Սիմոնյանը. «Կայսրության մեջ ստեղծվել էր յուրօրինակ մի դրություն. պետությունը թուրքական էր, բայց երկրի տնտեսության մեջ իշխող դիրքեր էին նվաճում ոչ թուրքերը, այլազգի «գյավուրները»»[67]: Ոչ մուսուլմանական բուրժուազիայի դեմ օսմանյան պետության պայքարն էլ ավելի ակտիվացավ երիտթուրքերի իշխանության գալուց հետո, ովքեր հստակ նպատակ էին դրել ստեղծել մուսուլման-թուրքական «ազգային բուրժուազիա»[68] և թուրքացնել կայսրության քրիստոնյա բնակչության գույքն ու ունեցվածքը: Երիտթուրքերի սկսած «ազգային բուրժուազիա», «ազգային տնտեսություն» ստեղծելու գործը դարձավ հանրապետական Թուրքիայի քեմալական ղեկավարների առաջնային խնդիրներից մեկը: Կարելի է վստահորեն պնդել նաև, որ Երկրորդ համաշխարհային պատերազմն առիթ էր հանդիսանալու թուրքական պետության և հասարակության առավել ընդգծված ազգայնամոլ հատվածի համար գործնական դաշտ տեղափոխել ոչ մուսուլմանների հանդեպ իրենց

---

[66] Bali R., “Yirmi Kura İhtiyatlar” olayı, Tarih ve toplum, İstanbul, 1998, cilt 30, sayı 179, s. 4.

[67] Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 20:

[68] Kazgan G., Tanzimat’tan 21. Yüzyıla Türkiye Ekonomisi: Birinci Küreselleşmeden İkinci Küreselleşmeye, İstanbul, 2009, s. 53.

ատելությունը, և դրա մեջ կարևոր դեր էր վերապահված նաև տնտեսական բաղադրիչին:

3.4 «Տնտեսական եղեռն» կամ հարկ՝ ըստ էթնիկ պատկանելության. Ունեցվածքի հարկի կիրառումն ու հետևանքները քրիստոնյա փոքրամասնությունների համայնքների վրա: 1942 թ., Թուրքիայի կառավարությունը, վարչապետ Շյուքրյու Սարաջօղլուի գլխավորությամբ, Ազգային մեծ ժողովի հաստատմանը ներկայացրեց, այսպես կոչված, Ունեցվածքի հարկի մասին օրենքը, որն ընդունվեց 1942 թ. նոյեմբերի 11-ին խորհրդարանի նիստին մասնակցող 350 պատգամավորների միաձայն քվեարկությամբ: Կարևոր է հատուկ շեշտել, որ Ունեցվածքի հարկի մասին օրենքը բացահայտորեն ուղղված էր ոչ մուսուլման փոքրամասնությունների դեմ, և դրանում բացակայում էին իրավական մի շարք կարևոր սկզբունքներ, ոտնահարվում էին մարդու իրավունքների հիմնարար արժեքները: Ունեցվածքի հարկը հարկատուներին բաժանում էր 4 խմբի, այն էլ՝ ըստ կրոնական պատկանելության ու քաղաքացիության՝ 1. մուսուլմաններ, 2. ոչ մուսուլմաններ, 3. կրոնափոխներ, 4. օտարահպատակներ: Ունեցվածքի հարկի ամենամեծ հակահիրավական դրույթներից էր այն, որ հանձնաժողովը կամայական էր հարկի չափը որոշելու հարցում, այսինքն՝ չկար հստակ որևէ չափանիշ և հարկատուն իրավունք չուներ որևէ տեղ բողոքարկել հարկաչափը: Եթե ոչ մուսուլման հարկատուները չէին կարողանում վճարել հարկը, պետականացվում և աճուրդով վաճառվում էր նրանց շարժական ու անշարժ գույքը: Իսկ եթե այդ ձևով ձեռք բերված գումարն էլ չէր բավարարում հարկի վճարմանը, ապա հարկատուներն աքսորվում էին տաժանակրության, որպեսզի աշխատելով վճարեին պետության հանդեպ իրենց «պարտքը»: Ունեցվածքի հարկի ընդունման պաշտոնական պատճառաբանությունը, ըստ վարչապետ Սարաջօղլուի, այն էր, որ դա ուղղված էր թուրքական լիրայի արժևորմանը, սև շուկայի, գների աճի և սպեկուլյանտների (չարաշահորդների) դեմ[69]: Իսկ իշխող Հանրապետական ժողովրդական կուսակցության խորհրդարանական խմբակցության փակ քննարկման ժամանակ վարչապետ Սարաջօղլուն ներկայացրել է Ունեցվածքի հարկի վերաբերյալ հետևյալ հիմնավորումը. «Այս օրենքը միևնույն ժամանակ հեղափոխական օրենք է: Մեր շուկայում գերիշխող օտարներին այսպիսով հեռացնելով թուրքական շուկան կտանք թուրքերին»[70]: Եվ ինչպես ցույց են տալիս փաստերը, ոչ մուսուլմաններից խլված անշարժ գույքի մոտավորապես 98 տոկոսին շատ էժան գներով տիրացել են թուրքեր, այլ մուսուլմաններ, պետական հաստատություններ, բանկեր:

---

[69] Akar R., Aşkale Yolcuları (Varlık Vergisi ve Çalışma Kampları), İstanbul, 2006, s. 58.

[70] Barutçu F. A., Siyasî Anılar 1939-1954, İstanbul, 1977, s. 263.

3.5 Թուրքիայի հայության ԽՍՀՄ արտագաղթելու գործընթացը՝ հետպատերազմյան զարգացումների համապատկերում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԽՍՀՄ և նացիստական Գերմանիայի չպատերազմող դաշնակցի՝ Թուրքիայի հարաբերություններում արձանագրվեց լուրջ լարվածություն, որը կապված էր ինչպես Մոսկվայի ներկայացրած հողային պահանջների (Կարսի և Արդահանի նահանգների), այնպես էլ սևծովյան նեղուցների ռեժիմի փոփոխության հարցի բարձրացման հետ: ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունների այդ լարված փուլում Հայկական հարցն ու ընդհանրապես հայկական թեմատիկան վերադարձան համաշխարհային քաղաքական օրակարգ՝ իր հերթին պատճառ դառնալով այլ զարգացումների: ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերություններում լարվածություն ստեղծող հանգամանքներից էր նաև հետպատերազմյան տարիներին սփյուռքահայերի սկիզբ առած ներգաղթը Խորհրդային Միություն, որը չի շրջանցել նաև Թուրքիայում բնակվող հայերին, ինչը դարձել է թուրքական իշխանությունների մտահոգության և արտագաղթել ցանկացող հայերի նկատմամբ հալածանքներ կիրառելու պատճառ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ: ՋԱՐԴԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔՍՈՒՄ. ՔՐԻՍՏՈՆՅԱ ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԻՐԱՌՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1950-1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ:

4.1 Կիպրոսի խնդիրը և 1955 թվականի սեպտեմբերի 6-7-ի ջարդարարությունները Թուրքիայում: 1950-ականներին Կիպրոս կղզու 600 000 բնակչության 82 տոկոսը կազմում էին հույները, իսկ 18 տոկոսը՝ թուրքերը[71]: Հույների շրջանում սկսված Հունաստանի հետ վերամիավորվելու շարժումը հանդիպեց Թուրքիայի և կիպրոսցի թուրքերի դիմադրությանը, որն էլ վերածվեց լուրջ կոնֆլիկտի և թուրք-հունական բախման՝ նաև ժողովրդագրական հետևանքներով: Այդ ժամանակաշրջանում Կիպրոսի խնդրի շուրջ միջազգային հարթակներում տեղի ունեցան շահագրգիռ ու միջնորդ պետությունների տարբեր պաշտոնյաների մի քանի հանդիպումներ՝ հաշտության եզրեր գտնելու նպատակով: 1955 թ. օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 7-ը Լոնդոնում Կիպրոսի խնդրի հետ կապված՝ հրավիրվեց անգլո-հունա-թուրքական կոնֆերանս՝ արտաքին գործերի նախարարների մակարդակով: Հենց այդ օրերին էլ հունական կողմի վրա ճնշումներ գործադրելու և զիջումներ պարտադրելու նպատակով Թուրքիայում իշխանությունների հրահանգով և քաջալերմամբ ուժեղացան հակահունական տրամադրություններն ու հալածանքները հունական համայնքի հանդեպ, որոնց գագաթնակետն էլ

[71] Еремеев Д., Турция в годы Второй мировой и “холодной” войн (1939-1990), Москва, 2005, стр. 87.

դարձան 1955 թ. սեպտեմբերի 6-7-ին Ստամբուլում, Իզմիրում հունական և հայկական համայնքների վրա թուրքական իշխանությունների կազմակերպած հրոսակախմբերի հարձակումները՝ «պոգրոմները» (թուրքերեն՝ 6-7 Eylül Olayları, հունարեն՝ «Septemvriana»), որոնք ուղեկցվել են քրիստոնյաների դաժան ծեծով և սպանություններով: 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերի ընթացքում հարձակման են ենթարկվել ոչ մուսուլմանների 4214 խանութ, 1004 տուն, 73 եկեղեցի, 1 սինագոգ, 2 վանք, 26 դպրոց, ինչպես նաև գործարան, հյուրանոց, բար, գերեզմանատուն, դեղատուն, լաբորատորիա, տպարան. ընդհանուր առմամբ 5622 օբյեկտ [72] : Դեպքերի ժամանակ հարձակման ենթարկված աշխատավայրերի 59 տոկոսը պատկանել է հույներին, 17 տոկոսը՝ հայերին, 12 տոկոսը՝ հրեաներին: Իսկ հարձակման ենթարկված տների 80 տոկոսը պատկանել է հույներին, 9 տոկոսը՝ հայերին, 3 տոկոսը՝ հրեաներին[73]: Հայոց ցեղասպանությունից 40 տարի անց՝ 1955-ին, հանրապետական Թուրքիայում կրկին տեղի ունեցավ ցեղասպանական գործողություն՝ պոգրոմ, և թիրախները կրկին քրիստոնյաներն էին, հիմնականում հույները և հայերը: Թուրքական պետության համար հիմնավորումը արտաքին ճակատում հույների հակաթուրքական գործունեությունն էր, որը փաստացի դարձավ քաղաքական վերնախավի և ազգայնամոլական հասարակական շրջանակների համագործակցության կարևոր ու միավորող գործոն ընդդեմ ներքին թշնամու՝ Թուրքիայի քաղաքացի քրիստոնյաների:

4.2 Յասսբադայի դատավարությունը որպես սկանդալային բացահայտումների ազդակ. պետության մասնակցությունը և դիտավորության հանգամանքը 1955 թ. ջարդարարություններում: 1960 թ. հոկտեմբերի 14-ին Մարմարա ծովի Յասսբադա կղզում սկսվեց 1960 թ. մայիսի 27-ի հեղաշրջումից հետո իշխանությունից հեռացված 592 տարբեր պաշտոնյաների, այդ թվում և Թուրքիայի նախկին նախագահ Ջելալ Բայարի, վարչապետ Ադնան Մենդերեսի, նախարարների, պատգամավորների դատավարությունը: Ներկայացված մեղադրանքների թվում էին նաև 1955 թ. սեպտեմբերի 6-ին և 7-ին Ստամբուլում Իզմիրում հույների ու հայերի նկատմամբ իրականացված ջարդարարությունները: Թուրքական դատարանը փաստացի մեղավոր է ճանաչել պետության բարձրաստիճան պաշտոնյաներին սեպտեմբերի 6-7-ի դեպքերը կազմակերպելու, հրահրելու, չկանխելու մեջ: Սակայն այդ դատավարությունը, միևնույն ժամանակ, տեղավորվում էր ներքաղաքական պայքարի շրջանակներում, առանձնանում էր կոնկրետ Ժողովրդավարական կուսակցության դեմ ուղղված լինելու հստակ միտումնավորությամբ, անտեսվում էր պետական այլ կառույցների՝ հատուկ ծառայությունների,

[72] 6-7 Eylül Olayları: Fotograflar-Belgeler: Fahri Çoker Arşivi, İstanbul, 2005, s. 260.
[73] Hür A., 6-7 Eylül Yağmasının Yaralarını Sarmak, Agos, 09, 09, 2011.

բանակի գերակա դերակատարումը ջարդարարությունների ընթացքում և, փաստորեն, ներկայացվում էր որպես զուտ ժամանակի իշխող կուսակցության ղեկավարների կողմից իրականացված հանցագործություն[74]: Ուշագրավ է նաև, որ թուրքական դատարանը նախկին իշխանությունների մեղքն ապացուցված համարելով հանդերձ՝ սխալ չի համարել Կիպրոսի հարցում Թուրքիայի ակնհայտ ծավալապաշտական նկրտումները: Սեպտեմբերի 6-7-ի դեպքերի դատավարության ողջ ընթացքը, ինչպես նաև դրան հաջորդած զարգացումները պատճառ դարձան, որպեսզի սկսվեն սկանդալային բացահայտումներ, որոնք մեր օրերում ևս երբեմն շարունակվում են: Տարատեսակ փաստերի և ապացույցների հիման վրա բացահայտվեց, որ սեպտեմբերի 6-7-ի դեպքերի նախապատրաստումը և իրականացումը կազմակերպել էին թուրքական հատուկ ծառայություններն իրենց գործակալների միջոցով[75]: Իսկ իշխող վերնախավի ներգրավվածության փաստը նաև ապացուցվում է հենց թուրք բարձրաստիճան պաշտոնյաների տարբեր ժամանակներում արած հայտարարությունների, հարցազրույցների միջոցով: Այդ փաստերը լիովին ապացուցում են ցեղասպանական արարքներում պետության դերի ու դիտավորության հանգամանքի առկայությունը:

4.3 Ոչ թուրքական տեղանունների փոփոխությունը՝ որպես թուրքացման քաղաքականության բաղկացուցիչ: Թուրքիայում ծավալվող համատարած թուրքացման քաղաքականությունն անխուսափելիորեն պետք է անդրադառնար նաև ոչ թուրքական տեղանուններին, քանի որ հանրապետության տարածքում բազմաթիվ էին բնիկ ժողովուրդների լեզուներով անվանակոչված վայրերը, որոնք ուղղակի ապացույցն էին նրանց նախկին հոծ ներկայության: Տեղանունները, միևնույն ժամանակ, ցույց են տալիս այդտեղ բնակված ժողովրդի պատմության, մտածելակերպի մի շարք մանրամասներ: Ինչպես ընդհանրապես թուրքացման քաղաքականությունը, այնպես էլ դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող տեղանունների թուրքացումը նոր երևույթ չէ և սկսվել է թյուրքական ցեղերի տարածաշրջան ներթափանցմանը զուգահեռ, սակայն այդ քաղաքականությունն ավելի ընդգծված և համակարգված բնույթ է ստացել 19-րդ դարի կեսերից, որն ավելի է խորացել երիտթուրքերի կառավարման շրջանում, իսկ հանրապետական Թուրքիայում՝ գտել իր վերջնական լուծումը: Թուրքիայում տեղանունների անվանափոխության գործընթացում կարևոր է 1940 թ., երբ ներքին գործերի նախարարությունը հրապարակել է հատուկ շրջաբերական, որտեղ հստակ նշվում է. «Օտար լեզուներից ու արմատներից ծագող և գործածման մեջ թյուրընկալումների պատճառ հանդիսացող բնակավայրերի և

---

[74] Güven D., Cumhuriyet Dönemi Azınlık Politikaları ve Stratejileri Bağlamında 6-7 Eylül 1955 Olayları, İstanbul, 2009, s. 99-101.

[75] Güven D., 6-7 Eylül Olayları, İstanbul, 2009, s. 15.

տեղանունների» թուրքերեն անվանումներով փոփոխման անհրաժեշտության մասին [76] : Սակայն Թուրքիայում տեղանունների փոփոխության առավել լայնածավալ գործընթացը սկսվում է 1957 թվականից, երբ հատուկ դրա համար ստեղծվում է «Տեղանունների փոփոխության մասնագիտական հանձնաժողով», որի մեջ ընդգրկվում են զինված ուժերի գլխավոր շտաբի, ներքին գործերի, պաշտպանության, կրթության նախարարությունների, Անկարայի համալսարանի լեզվական, պատմա-աշխարհագրական ֆակուլտետների և Թուրքական լեզվական ընկերության ներկայացուցիչներ: Ամենաշատը տեղանունները փոխվել են Թուրքիայի արևելյան, հարավարևելյան և սևծովյան շրջաններում, այսինքն՝ հիմնականում պատմական հայկական և հունական տարածքներում: Նշենք նաև, որ Սև ծովի հարավարևելյան շրջաններում ևս բավական մեծ թիվ են կազմել հայկական տեղանունները, քանի որ հիմնականում հենց այնտեղ են գտնվում համշենահայկական բնակավայրերը: Հարկ է նշել, որ տեղանունների թուրքացման քաղաքականությունն անդրադարձել է նաև Ստամբուլի հայկական և հունական փողոցների, թաղամասերի անվանումներին:

4.4 Միատարր Թուրքիայի ճանապարհի «հունական վերջին խոչընդոտը». 1964 թ. հույների արտաքսումը Ստամբուլից ("Apelassis"): Փաստերի համադրմամբ կարող ենք ասել, որ ոչ թուրք փոքրամասնությունների դեմ հալածանքների պետականորեն մշակված մասշտաբային ծրագրի կարևոր օղակներից է 1964 թվականին ստամբուլաբնակ հույների արտաքսումը: 1930 թ. հունիսի 10-ին Անկարայում Թուրքիայի նախագահ Մուսթաֆա Քեմալը և Հունաստանի վարչապետ Վենիզելոսը ստորագրեցին բնակության, առևտրի և ճանապարհորդելու վերաբերյալ մի պայմանագիր, որի 3-րդ կետով ճանաչվում էր երկու երկրների քաղաքացիների՝ Թուրքիայում՝ հունահպատակների և Հունաստանում՝ թուրքահպատակների բնակության, առևտրով զբաղվելու, գույք ձեռք բերելու, վաճառելու իրավունքը: Այդ ժամանակ Թուրքիայում, հիմնականում՝ Ստամբուլում, կային Հունաստանի քաղաքացի հանդիսացող հազարավոր մարդիկ, որոնք և իրենց նախնիները ծնվել ու բնակվում էին Թուրքիայի տարածքում: Հակահունական քայլերի և գործողությունների շրջադարձային կետ դարձավ 1964 թ. մարտի 16-ը, երբ Թուրքիայի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ միակողմանի կերպով չեղյալ է ճանաչում 1930 թ. Թուրքիայի և Հունաստանի միջև կնքված պայմանագիրը, ինչը Թուրքիայի իշխանություններին տալիս էր իրավական հիմք Ստամբուլում բնակվող Հունաստանի քաղաքացի հույների արտաքսման համար: 1964 թվականին Ստամբուլում բնակվել է հունական քաղաքացիություն

[76] Harun T., Türkiyede ismi değiştirilen köyler, Fırat Üniversitesi Sosyal Bilimleri Dergisi, Elazığ, 2000, cilt: 10, sayı: 2, s. 27.

ունեցող մոտ 12 000 մարդ, որոնք ենթակա էին պարտադիր արտաքսման: Այս 12 000-ի արտաքսումը, սակայն, ենթադրում էր ավելի լայն ծավալների ընդգրկում, քանի որ նրանք ամուսնական և ընտանեկան կապերով կապված էին Թուրքիայի քաղաքացի հույների հետ: Այսինքն՝ կային բազմաթիվ ընտանիքներ, որտեղ, օրինակ, կինը Հունաստանի քաղաքացի էր, իսկ ամուսինը՝ Թուրքիայի, և արտաքսման հրամանից հետո ստիպված արտագաղթելու էր ամբողջ ընտանիքը: Ըստ տարբեր աղբյուրների, այդ ընթացքում Թուրքիայից արտաքսված և «կամովին» հեռացած հույների թիվը գերազանցում էր 40 000-ը: Հարկ է հատուկ շեշտել, որ արտաքսման ենթակա անձին տրվում էր մեկ կամ առավելագույնը երկու օր՝ պատրաստվելու և Թուրքիայից հեռանալու համար: Թուրքական կառավարությունը թույլ էր տվել, որպեսզի արտաքսվող հույնը իր հետ վերցնի 20 կիլոգրամը չգերազանցող ճամպրուկ՝ անձնական իրերով, և 200 թուրքական լիրա գումար, որն այդ ժամանակ հավասար էր 22 ԱՄՆ դոլարի[77]: Նկատենք, սակայն, որ Հունաստանն ամեն հնարավոր առիթի դեպքում արտաքսված հույների գույքի հարցը բարձրացնում էր միջազգային հարթակներում, և ի վերջո 1988 թ. Դավոսի գագաթաժողովի ժամանակ Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալը ստիպված է լինում խոստանալ վերադարձնել այդ գույքը:

4.5 Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքության ընտրական խնդիրները և հայահավաք գործունեության առանձնահատկությունները 1950-1960-ական թթ.: 1944 թ. վախճանվել է Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Մեսրոպ Նարոյանը և Թուրքիայում ծավալվող ծայրահեղ ազգայնամոլության պայմաններում թուրքական իշխանությունները, անորոշ ժամանակով, արգելել են հայ համայնքին պատրիարք ընտրել: Ստեղծված իրավիճակին միջամտել են Ամենայն Հայոց Գևորգ Զ և Կիլիկիայի Գարեգին Ա կաթողիկոսները. ի վերջո, 1950 թվականի վերջին անցկացվել են Պոլսո պատրիարքի ընտրություններ, և Հայոց պատրիարք է ընտրվել Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանը, որն այդ ժամանակ Լատինական Ամերիկայի Հայոց հոգևոր առաջնորդն էր: 1953 թ. կյանքի է կոչվել Գարեգին պատրիարքի մտադրությունը, և բացվել է Սուրբ Խաչ Դպրեվանքը, որի նպատակներից էր Թուրքիայի գավառներում մնացած և ուծացման տարբեր աստիճաններում գտնվող հայության բեկորներին վերադարձնել իրենց ակունքներին: Հատուկ պետք է շեշտել, որ պատրիարքության հայահավաք գործունեությունը և՛ այդ ժամանակ, և՛ հետագայում ընթացել է թուրքական իշխանությունների հարուցած խոչընդոտների և երբեմն բիրտ ճնշումների պայմաններում: 1961 թ. մահացել է Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանը, և կրկին առաջ է եկել պատրիարք ընտրելու խնդիրը: Հայ Առաքելական եկեղեցու և Թուրքիայի հայ համայնքի

[77] Demir H., Akar R., İstanbul'un Son Sürgünleri, İstanbul, 1994, s. 72.

համար կարևոր այդ ժամանակ Թուրքիա է այցելել Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը: Կաթողիկոսի Թուրքիա կատարած այցի ամենակարևոր կետը և, ըստ էության, առաքելությունը Կոստանդնուպոլսի Հայոց նոր պատրիարքի ընտրության հարցն է եղել, որը գտնվել է և՛ թուրքական, և՛ ամերիկյան, և՛ խորհրդային հետաքրքրությունների կիզակետում: Այդ բարդ իրավիճակում և ուժերի դասավորվածության պարագայում երջանկահիշատակ Վազգեն վեհափառը առաջնորդվելով հայ ժողովրդի և եկեղեցու շահերով՝ կարողացել է հետամուտ լինել դրանց և ի վերջո հասնել հաջողության: 1961 թ. հոկտեմբերի 11-ին տեղի ունեցած ընտրություններում Պոլսո Հայոց պատրիարք է ընտրվել Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը [78] : Նրա ջանքերով համայնքային կյանքում աշխուժություն է նկատվում, շարունակվում են նաև աշխատանքները գավառահայության վիճակի բարելավման և ուծացումից փրկելու ուղղությամբ: Շնորհք պատրիարքը ոչ միայն ակտիվորեն զբաղվել է ուծացած հայության հարցերով, այլև գիտական հետազոտության է ենթարկել խնդիրը, տվել Թուրքիայում բնակվող հայության խմբային բաժանումներ, որոնք մինչև այժմ էլ օգնում են թեմայով զբաղվողներին[79]:

4.6 Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի հայազգի պատգամավորների գործունեությունը 1950-1960-ական թթ.՝ պետական խտրական վերաբերմունքի համապատկերում: 1946 թ. Թուրքիայում բազմակուսակցական համակարգի հաստատումից հետո քաղաքական ասպարեզ մտած Ժողովրդավարական կուսակցության ցուցակով պատգամավոր են դարձել երեք հայազգի գործիչներ. 1950-1954 թթ.՝ Անդրե Վահրամ Բայար-Քոջաբըյըքյանը[80], 1954-1957 թթ. և 1957-1960 թթ.՝ Զաքար Թարվերը, 1957-1960 թթ.՝ Մկրտիչ Շելեֆյանը: Իր ժամանակի ամենահայտնի բժիշկներից մեկը՝ Զաքար Թարվերը սկսելով քաղաքական գործունեությունը՝ նախ ընտրվել է Ստամբուլի քաղաքային ավագանու անդամ, իսկ 1954 թ. Ժողովրդավարական կուսակցության ցուցակով՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր: Հաջորդ՝ 1957 թ. ընտրություններին ևս Զաքար Թարվերը ընտրվել է պատգամավոր: 1960 թ. մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո ձերբակալվել են մոտ 600 նախկին պետական պաշտոնյաներ, պատգամավորներ և նրանց թվում նաև Զաքար Թարվերը, որն, ըստ պաշտոնական վարկածի, ձերբակալությունից

---

[78] Շնորհք արք. Գալուստեան Պատրիարք Հայոց Թուրքիոյ. կյանքը եւ գործը (ուսումնասիրեց եւ գրի առաւ Ռոպէր Հատտէճեան), Իսթանպուլ, 1987, էջ 56:

[79] Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005), Անթիլիաս, 2009, էջ 27:

[80] Պատգամավոր Անդրե Վահրամ Բայար-Քոջաբըյըքյանի մասին ո՛չ պոլսահայ մամուլում, ո՛չ հայալեզու և թուրքալեզու հետազոտություններում չենք հանդիպել բավարար տեղեկությունների և փաստերի, ուստի բավարարվել ենք լոկ նրա անունը հիշատակելով:

կարճ ժամանակ անց մահացել է Յասսըադայի բանտում «սրտի կաթվածից»[81]: Սակայն մի շարք այլ աղբյուրներում նշվում է, որ Զաքար Թարվերը ենթարկվել է կտտանքների և ծեծի ու իրականում մահացել ուղեղի արյան զեղումից: Կարևոր է փաստել, որ Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավորի սպանությունը նույնիսկ չի էլ դարձել հետաքննության նյութ, և թուրքական իշխանությունները քողարկել են այն:

Վստահաբար կարող ենք պնդել, որ Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավորների շարքում առանձնահատուկ տեղ ունի Մկրտիչ Շելեֆյանը, որի նպաստը համայնքային և ազգային խնդիրներին անուրանալի է: Դրամատիկ զարգացումներով հարուստ իր կյանքի տարբեր փուլերում Մկրտիչ Շելեֆյանը եղել է Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության, Ստամբուլի հայ համայնքի, գավառներում մնացած իսլամացված հայերի խնդիրների, հետագայում նաև խորհրդային Հայաստանի և Սփյուռքի հարաբերությունների կիզակետում: 1957 թ. ԺԿ ցուցակով ընտրվելով պատգամավոր՝ Շելեֆյանը լայն թափով շարունակել է հայ համայնքի խնդիրների լուծմանն ուղղված իր գործունեությունը: 1960 թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումից հետո ձերբակալվել է նաև Մկրտիչ Շելեֆյանը: Ուշագրավ է, որ նա խիզախ պահվածք է դրսևորել և՛ նախաքննության, որն ուղեկցվել է դաժան կտտանքներով, և՛ դատական նիստերի ժամանակ: 1962 թ. բանտից ազատ արձակվելուց հետո Մկրտիչ Շելեֆյանը զբաղվել է բիզնեսով, ինչպես նաև եղել Ստամբուլի հայ համայնքի փաստացի ղեկավարներից մեկը: Մկրտիչ Շելեֆյանի դիվանագիտական հմտությունները դրսևորվել են նաև արտաքին քաղաքականության ոլորտում. 1960-ականներին նա ակտիվ, բայց ոչ հրապարակային դեր է խաղացել թուրք-հունական բանակցություններում:

4.7 Թուրքիայի քաղաքականության ընդհանուր միտումները հայ համայնքի նկատմամբ 1950-1960-ական թվականներին. մեթոդների և ոճի շարունակականություն: Արխիվային փաստաթղթերը, մեր կողմից իրականացված դաշտային-հետազոտական աշխատանքները, մամուլի հրապարակումները և տարատեսակ ուսումնասիրությունները փաստում են, որ 1950-ական թվականներին թուրքական պետությունն ինչպես Ստամբուլի հայ համայնքի, այնպես էլ տարբեր գավառներում գոյատևած հայության առանձին խմբերի հանդեպ շարունակել է խտրական քաղաքականությունը, որը դրսևորվել է հալածանքի տարբեր մեթոդներով այդ թվում և բռնի կրոնափոխության: Բնականաբար, ճնշումները, բռնի իսլամացման սպառնալիքը պետք է պատճառ դառնային, որպեսզի Թուրքիայի հայերի շրջանում կրկին ակտիվանար արտագաղթելու ալիքը:

[81] Ertani E., 27 Mayıs'ın unutturulmuş kurbanı Dr. Zakar Tarver, Agos, 10, 06, 2011.

Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ժխտման քաղաքականության հիմնական թեզերի վերախմբագրման և հստակեցման կարևոր ժամանակաշրջան կարելի է համարել 1965 թվականը՝ ցեղասպանության 50-ամյակը: 1965-ին Խորհրդային Հայաստանում և հայկական Սփյուռքում տեղի ունեցող զարգացումներն ու գործողությունները՝ կապված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հետ, ստիպեցին Թուրքիային որոշ հակաքայլեր ձեռնարկել, որոնք կարճ ժամանակ անց դարձան թուրքական ժխտողական քաղաքականության և հակահայկական քարոզչության հիմքերը: Հենց այդ քաղաքականությունն է որոշ վերափոխումներով և հավելումներով շարունակվել հաջորդող տասնամյակներում և հասել մինչև մեր օրերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ բաժնում ներկայացված են աշխատանքի արդյունքում ձևավորված հիմնական եզրահանգումները.

Հայոց ցեղասպանությունից հետո էլ Թուրքիայում գոյատևած հայության նկատմամբ պետական քաղաքականությունն իր բնույթով շարունակել է մնալ ընդգծված խտրական: Սրանում դրսևորվել են գաղափարախոսական, քաղաքական, կադրային շարունակականության հստակ բաղադրիչները, և փաստացի երիտթուրքական հակաքրիստոնեական գործելակերպն ու մտածելակերպը դարձել են հանրապետական Թուրքիայի պաշտոնական քաղաքական ուղեգծի հիմքերը:

Թուրքական պետական մտածողության մեջ, այդ երկրի անվտանգային առաջնահերթություններում և գաղափարա-քարոզչական դաշտում հայերի ու հույների հանդեպ ծայրահեղ բացասական, թշնամական քաղաքականությունն ունի կարևոր և գերակայող դեր: Թուրքական պետականությունը վերստեղծելու, այդ պետականությունը վտանգներից պաշտպանելու պետական-պաշտոնական քարոզչությունը կառուցվել է նաև հակահայկականության և հակահունականության միջոցով: Թուրքիայի հասարակական-քաղաքական դաշտում դրա հավաքական ընկալման դրսևորումներից կարող ենք համարել «ատելության խոսքը», որը մինչ օրս էլ շարունակվում է՝ պահպանելով իր կայուն դիրքը:

Քեմալականների հիմնած Թուրքիայի տեսլականը միատարր, այն է՝ թուրք-մուսուլմանական պետությունն էր, ուստի ցեղասպանություններից հետո գոյատևած քրիստոնյա հայերը և հույները շարունակում էին մնալ իրար հաջորդող թուրքական կառավարությունների և վարչակարգերի թիրախը: Այս մտածողությունը գործնական դրսևորում է ունեցել հայերի և հույների հանդեպ ինչպես ցեղասպանական տարբեր արարքների (աքսոր, զանգվածային կոտորած, ցեղասպանություն, ջարդարարություն) կիրառման, այնպես էլ միջազգային պայմանագրերով «իրավականորեն» հիմնավորված կամ պետական անհրաժեշտությամբ պայմանավորված շարունակական

հայրենազրկման (արտաքսումների) միջոցով: Կարևոր է փաստել, որ Թուրքիայում տարբեր տարիներին արձանագրված ցեղասպանական գործողություններում պետության դիտավորության հանգամանքն ակնհայտ դրսևորված է ինչպես տարատեսակ փաստաթղթերում (օրենքներ, հրահանգներ, նամակագրություն և այլն), այնպես էլ հրապարակային ելույթներում ու հայտարարություններում:

Թուրքիայի Հանրապետությունը շարունակել է նաև տնտեսական եղեռնի կամ իր երկրի քաղաքացիների գույքի նկատմամբ պետականորեն կիրառված զավթման քաղաքականությունը: Դա դրսևորվել է հետցեղասպանական Թուրքիայում հայերի և հույների լքյալ գույքի համակարգված թալանով և յուրացմամբ, ինչպես նաև իր քաղաքացիների էթնիկ պատկանելությամբ պայմանավորված օրենքների կիրառմամբ:

Ցեղասպանական քաղաքականության բաղադրիչներից է նաև հայերի, հույների, ինչպես նաև ոչ թուրք այլ ժողովուրդների մայրենի լեզուների նկատմամբ կիրառված խտրական քաղաքականությունը, որի հետևանքով մի շարք լեզուներ պահպանվել են լոկ ընտանիքների ներսում և այն էլ՝ «սիմվոլիկ մակարդակում», կամ կանգնած են կորստի եզրին, ինչն ամրագրված է միջազգային համապատասխան կառույցների կողմից: Այս նույն համապատկերում կարելի է դիտարկել հայկական/հայերեն և հունական/հունարեն տեղանունների հետևողական փոփոխության՝ թուրքացման (թուրքերեն դարձնելու կամ խեղաթյուրելու) քաղաքականությունը:

Եթե այսօր Օսմանյան կայսրության հատկապես 19-20-րդ դարերի քաղաքականության ուսումնասիրությունը թույլ է տալիս վստահաբար կիրառել «ցեղասպան պետություն» հիմնավորված եզրը, ապա հատկապես քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ Թուրքիայի Հանրապետության 20-րդ դարի 20-60-ական թվականների քաղաքականության ուսումնասիրությունը հիմք է տալիս այն անվանել «այլամերժ պետություն»:

<u>ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում</u> ներկայացված են 1920-1960-ականներին հայերի և հույների թվաքանակը Թուրքիայի Հանրապետությունում՝ ըստ պաշտոնական փաստաթղթերի և մարդահամարների ու դրանց նվազումն ուղիղ համեմատական է Թուրքիայի իշխանությունների վարած լայնամասշտաբ և բազմոլորտ հալածանքի քաղաքականության հետ:

<u>Հավելված 2-ում</u> տրված է Լոզանի պայմանագրի Թուրքիայի քրիստոնյա (ոչ մուսուլման) փոքրամասնություններին վերաբերող հոդվածների հայերեն թարգմանությունը:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

Ա) Մենագրություններ

1. Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, Երևան, Նորավանք, 2009, 112 էջ:

2. Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2010, 104 էջ:

3. La Communauté Arménienne D'Istanbul Des Années 1920 À Nos Jours, Paris-Alfortville, Sigest, 2012, 112 էջ.

4. Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2015, 240 էջ (համահեղինակ՝ Աբրահամյան Միհեր):

Բ) Հոդվածներ

1. Իսլամացված հայերի խնդիրը Թուրքիայում. ընդհանուր պատկերի ուրվագծման փորձ, 21-րդ դար Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, 2008, թիվ 1, էջ 107-123:

2. «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 5, Երևան, 2008, էջ 127-143:

3. Թուրք պատմաբանը իսլամացված հայերի մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2007, թիվ 3, էջ 96-104:

4. Ցեղասպանությունը վերապրած Սասունի հայության արդի խնդիրների շուրջ, Տեղեկագիր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի, Երևան, 2008, թիվ 23, էջ 5-19:

5. Հայկական էթնիկ տարրի ներկայիս վիճակը Արևմտյան Հայաստանում, Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները գիտագործնական միջազգային գիտաժողով: Նիկոսիա, ապրիլի 18-20, 2008 թ., գիտական զեկուցումների ժողովածու, Երևան, 2009, էջ 138-149:

6. Տեղանունների փոփոխությունը՝ որպես թուրքացման քաղաքականության բաղադրիչ, 21-րդ դար, Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, 2009, թիվ 6, էջ 30-37:

7. Современное состояние армянского этнического элемента в Западной Армении, Основополагающие правовые требования западного армянство: (Сборник научных докладов), Международная научно-практическая конференция, Кипр-Никосия, 18-19 апреля 2008 г., Москва, ЮниПресс, 2009, стр. 145-159.

8. О некоторых проблемах армянского нацменьшинства в Турции, 21-й век, Ереван, 2010, № 4, стр. 84-90.
9. Об образовательных проблемах армян Турции, 21-й век, Ереван, 2011, № 3, стр. 111-118.
10. Մկրտիչ Շելեֆյան. վերջին հայ պատգամավորը թուրքական խորհրդարանում, 21-րդ դար, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, Երևան, 2011, թիվ 5, էջ 5-19:
11. Եվրոպայի կրոնադարձ հայերի խմբերը, Սփյուռքի դավանանքային հատվածների խնդիրները և հնարավորությունները, (կոլեկտիվ մենագրություն), Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2011, էջ 99-114:
12. Թուրքական իշխանությունները և Հայոց պատրիարքարանը 1920-60-ական թվականներին, Էջմիածին, (պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի), Ս. Էջմիածին, 2012, № Ե, էջ 63-69:
13. О некоторых особенностях налоговой политики Турции по отношению к национальным меньшинствам, Алма матер Вестник высшей школы, Москва, 2012, № 7, стр. 73-77 (համահեղինակ՝ Նաիրա Պողոսյան):
14. «Էթնիկ զորակոչ» Թուրքիայի Հանրապետությունում (1941-1942 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2012, թիվ 2-3, էջ 42-50:
15. Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի հայազգի պատգամավորները (1935-1960թթ.), Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2012, հ. 7, էջ 166-186:
16. 1955 թվականի սեպտեմբերի 6-7-ի դեպքերը (Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների դեմ բռնությունների հերթական դրսևորումը), Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, 2013, հ. 8, էջ 144-156:
17. A General Overview of the Turkish Government’s Policy towards Armenian Minority (չինարեն), Global Studies Review, vol. 2, Shanghai, 2015, p. 110-119 (համահեղինակ՝ Հովհաննես Հովհաննիսյան):
18. Հայոց ցեղասպանության կազմակերպիչների և իրականացնողների հերոսացման գործընթացը Թուրքիայում (1920-ական թվականներ), Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2015, թիվ 2 (199), էջ 61-71:
19. ԽՍՀՄ արխիվային փաստաթղթերը Թուրքիայի հայության և նրանց շրջանում տեղի ունեցած որոշ զարգացումների շուրջ (1945-1965 թթ.), Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, 2015, հ. 10, էջ 65-75:
20. 1936-38ի Դերսիմի ցեղասպանութեան հայկական ուղուածութեան շուրջ, Հայկազեան հայագիտական հանդէս, Պեյրութ, 2015, հատոր ԼԵ (35), էջ 399-420:

21. Հայոց ցեղասպանության նկատմամբ թուրքական քաղաքականության որոշ առանձնահատկությունների շուրջ (1965 և 2015 թթ.), Հայագիտության հարցեր, Երևան, 2015, թիվ 3 (6), էջ 11-21:
22. Թուրքական լեզվաքաղաքականության ազգայնամոլական ուղղվածության շուրջ, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, 2016, հ.11, էջ 110-118:
23. Погромы греков и армян в Турции 6-7 сентября 1955 года, Историческое пространство: проблемы истории стран СНГ, издание Международной Ассоциации Институтов истории стран СНГ, Москва, Издательство “Наука”, 2015, стр. 269-275.
24. Վազգեն առաջին կաթողիկոսի 1961 թ. Թուրքիա կատարած այցի որոշ մանրամասների շուրջ (արխիվային փաստաթղթերի լույսի ներքո), Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, 2016, հ.12, էջ 58-66:
25. Հայերը Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում (1945-1991 թթ.), Հայոց պատմություն, հատոր IV, գիրք II, նորագույն ժամանակաշրջան (1945-1991 թթ.), ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Երևան, «Զանգակ» հրատ, 2016, էջ 500-521:
26. Հույների արտաքսումը Ստամբուլից 1964 թվականին, ՎԷմ համահայկական հանդես, Երևան, 2018, թիվ 2 (62), էջ 177-194:
27. Երիտթուրքեր-քեմալականներ. գաղափարական և կադրային շարունակականություն, Արևելագիտության հարցեր, Երևան, 2018, հ.14, էջ 152-165:
28. Отношения между Турцией и нацистской Германией в годы Второй мировой войны: теоритические и практические сферы влияния, XXX Международный конгресс по источниковедению и историографии стран Азии и Африки: к 150-летию академика В.В. Бартольда (1869-1930), 19-21 июня 2019 г., Материалы конгресса, Санкт-Петербург, Изд-во Студия “НП-Принт”, 2019, том 1, стр. 161-163.

МЕЛКОНЯН РУБЕН ОГАНЕСОВИЧ
ПОЛИТИКА ТУРЦИИ ПО ОТНОШЕНИЮ К ХРИСТИАНСКИМ МЕНЬШИНСТВАМ (АРМЯНЕ, ГРЕКИ) В 1920-1960 ГГ.

Диссертация на соискание учёной степени доктора исторических наук по специальности 07.00.02 -«Всемирная история, международные отношения».

Защита состоится на заседании специализированного совета 006 ВАК "Всемирная история" при Институте востоковедения НАН РА 23 декабря 2019 г. в 14:30, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию дискриминационной политики Турции по отношению к христианским меньшинствам – армянам и грекам - в период 1920-1960 гг. Военно-политические процессы в Турции, начавшиеся после поражения Османской империи в Первой мировой войне, играли важную роль как во всем ближневосточном регионе, так и в деле сохранения турецкой государственности. Важнейшим из этих процессов, конечно, является движение, возглавляемое военным и политическим деятелем Мустафой Кемалем (с 1934 года – Ататюрк), которое ставило перед собой цель спасти распадающуюся Османскую империю. На этом пути главными мишенями стали выжившие после геноцида местные христианские народы – армяне и греки (а также Армения и Греция – как государства), а еще шире – армянские и греческие факторы в целом. Преобладающее большинство участников возглавляемого Кемалем движения являлись бывшими членами младотурецкой партии "Единение и прогресс" - носители ксенофобской и геноцидальной идеологий, т.е. организаторы и участники геноцида и патриоцида армян и греков. Вот почему и в деятельности этого движения (1919-1923 гг.), и в образованном впоследствии государстве - в Турецкой республике - ярко выраженная дискриминационная политика против армянского и греческого народов имела продолжение. Она была направлена на окончательную реализацию начатой еще в 19-ом веке геноцидальной политики. В диссертации автором выдвигается тезис о Турецкой республике как о «ксенофобском государстве». Данный тезис фактически является продолжением разработанной и доказанной рядом ученых концепции, согласно которой Османское государство является «геноцидальным государством».

Диссертация состоит из введения, четырех глав с соответствующими подглавами, заключения, приложений, списка использованных источников и литературы.

Во **ВВЕДЕНИИ** обосновывается актуальность темы, представлены цели и задачи диссертации, научная новизна, хронологические рамки, а также обзор использованных источников, литературы и дан анализ степени изученности данной проблемы.

Первая глава “**ФОРМИРОВАНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ КСЕНОФОБСКОЙ ПОЛИТИКИ В ТУРЦИИ ПО ОТНОШЕНИЮ К ХРИСТИАНСКИМ НАРОДАМ (АРМЯНЕ, ГРЕКИ**)” состоит из четырех подглав, в которых рассматривается проблема армян и греков как основных мишеней «риторики ненависти» националистического движения и республиканской Турции, отношения к армянам и грекам во время Лозаннских переговоров и положения об армянах и греках в Лозаннском договоре, проблема греко-турецкого обмена населением, а также представлены принципы подходов и образа мышления кемалистов и турецких властей.

Вторая глава **«ПЕРИОД «КЕМАЛИСТСКОГО ГОСУДАРСТВА» И ХРИСТИАНСКИЕ МЕНЬШИНСТВА»** состоит из семи подглав, в которых рассматриваются проблема армянского присутствия в постгеноцидальной Турции, проблема присвоения государством имущества армян и греков, политика запрета на употребление армянского и греческого языков в Турции, организованные уже со стороны республиканской Турции изгнание армян, геноцид в Дерсиме, вынужденное переселение армян Александретского санджака (аннексированный Турцией) и государственная политика героизации младотурок в Турции.

В третьей главе «**ПРОДОЛЖЕНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ ДИСКРИМИНАЦИОННОЙ ПОЛИТИКИ И «ЭКОНОМИЧЕСКОГО ГЕНОЦИДА» В ТУРЦИИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ»,** состоящей из пяти подглав, представлены отношения Турции и нацистской Германии в годы Второй мировой войны, военный призыв немусульманского населения в годы войны, немусульманское присутствие в экономике и политика его преследования государством. Подробно изучен самый яркий пример экономического преследования христианских меньшинств – Налог на имущество (Varlık vergisi), а также процесс эмиграции армян Турции в СССР после окончания Второй мировой войны.

Четвертая глава «**ПОГРОМ И ИЗГНАНИЕ: ФИЗИЧЕСКИЕ, ПОЛИТИЧЕСКИЕ ПРЕСЛЕДОВАНИЯ ХРИСТИАНСКИХ МЕНЬШИНСТВ В ТУРЦИИ В 1950-1960 ГГ.»** состоит из семи подглав. Они посвящены проблеме Кипра и погромам 6-7 сентября 1955 г., участию в этом государства и фактору преднамеренности в этих событиях, изменениям нетурецких топонимов, изгнанию греков из Стамбула в 1964 г., специфике работы Константинопольского армянского патриархата, деятельности депутатов-армян в парламенте Турецкой Республики и общим тенденциям политики Турции по отношению к армянской общине.

В **ЗАКЛЮЧЕНИИ** обобщены основные выводы, полученные в ходе работы над диссертацией.

RUBEN HOVHANNES MELKONYAN

TURKEY'S POLICY TOWARDS CHRISTIAN MINORITIES (ARMENIANS, GREEKS) DURING THE 1920s-1960s

The dissertation is submitted for pursuing the Scientific Degree of the Doctor of Sciences in the field of "World History, International Relations" 07.00.02.

The defense of the dissertation will take place on December 23th, 2019, at 14:30 at the meeting of the Supreme Certifying Committee Specialized Council 006, at the Institute of Oriental Studies of the RA NAS.

SUMMARY

The present dissertation is historical research on Turkey's discriminatory policy towards Christian minorities – Armenians and Greeks in the 1920s-1960s. Military-political processes, which took place after the defeat of the Ottoman Empire in WWI, played an important role not only in the Middle East, but also in ensuring the continuity of the Turkish statehood. Among those the movement led by military figure and politician Mustafa Kemal (Atatürk after 1934) was of critical importance. It aimed to save the collapsing Ottoman Empire. Local Christian people - Armenians and Greeks as well as Greece and Armenia (or in a broader sense the Armenian and Greek factors), that had survived the genocides were among the most important targets. The vast majority of the participants of the Kemalist movement were former members of the Young Turks (i.e. the Party of Union and Progress), who were the followers of the exclusionary and genocidal ideologies, i.e. organizers and implementers of the genocides against Armenians and Greeks and the ones that deprived both nations of their motherland. Thus, during the movement that they had started (1919-1923) and in the state established thereafter, i.e. the Republic of Turkey, the discriminatory policy towards Armenians and Greeks persisted. It was aimed at completing the plan for the genocide devised in the 19th century.

In the dissertation the author suggests the theory of the Republic of Turkey as an "exclusionary state", which in fact is the continuation of a concept developed and argued by the scientific community, which presents the Ottoman Empire as a "genocidal state".

The dissertation is comprised of an introduction, four chapters with subchapters, a conclusion, appendixes, the list of the sources used and a bibliography.

The **INTRODUCTION** states the topicality of the theme, the goals and objectives, scientific novelty, chronological framework and examines the scientific sources and literature used therein.

Chapter One is entitled **"THE FORMATION OF THE EXCLUSIONARY STATE POLICY TOWARDS CHRISTIAN PEOPLE (ARMENIANS, GREEKS) IN TURKEY"** and consists of four subchapters. It examines Armenians and Greeks as the main targets of "hate speech" of the nationalistic movement and Republican Turkey, the main points about Armenians and Greeks during the Lozan negotiations and in the Lozan agreement, the problem of Greek-Turkish population exchange and the continuity of the working styles and mindsets of the Young Turk and Kemalist authorities.

Chapter Two is entitled "**THE PERIOD OF KEMALIST STATE AND CHRISTIAN MINORITIES**" and consists of seven subchapters. It explores the Armenian presence in post-genocide Turkey, the problem of the state plunder of the Armenian and Greek assets, the Turkish policy to ban the Armenian and Greek languages, the exile of Armenians organized by Republican Turkey, the Dersim Genocide, the exodus of Armenians from the Sanjak of Alexandretta annexed by Turkey and the policy of heroization of the Young Turks in Turkey.

Chapter Three entitled **"THE CONTINUATION OF DISCRIMINATORY POLICY AND "ECONOMIC GENOCIDE" IN TURKEY DURING WWII"** consists of five subchapters. It examines Turkey - Nazi Germany relations during WWII, the military conscription of non-Muslims during the wartime, the non-Muslim presence in the economy and the state persecution policy towards it. The most vivid examples of the economic persecution of Christian minorities (Wealth Tax, as well as the process of the emigration of Turkey's Armenians to USSR) are being examined.

Chapter Four is entitled "**POGROMS AND DEPORTATION: PHYSICAL AND POLITICAL PERSECUTIONS OF CHRISTIAN MINORITIES IN TURKEY IN THE 1950s-1960s."** It consists of seven subchapters, which are devoted to the Cyprus dispute and September 6-7 Istanbul pogroms, the participation of the state and the factor of intent, the Turkification of the non-Turkish toponyms, the 1964 Istanbul Greeks Deportation, the peculiarities of the Constantinople Armenian Patriarchy, the activities of the parliamentarians of Armenian origin in the Turkish Parliament and to the general tendencies of Turkey's policy towards the Armenian community.

The **CONCLUSION** summarizes the main results of the research.